



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

891. 99.

81 - 38



398.5(91.54)
Գ-36

ՀԱՅ-ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ

ՀԵՖԻԱՓՈՒԹԵՐ

ԺՈՂՈՎՐԴԱՅԻ

ՏԻԳՐԱՆԱՑ ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆՑ

ԻՆՆԵՐՈՐԴ ԳԻՐՔ

~~~~~ԾԱՌԱԾ~~~~~

ՓԻՖԼԻԾ  
Տակարան Կ. Մարտիրոսյանց | Տպ. Կ. Մարտիրօսանձ.  
Большая Винская № 5

1902

Ф. З. Загородний Народохреститель

Uppfyllelse.

891-99 Evergreenapples  
7-38 hwy sign.  
Hoffnung Rd.  
9-3-7589 11/2-81

891.99  
4-38

## ՀԱՅ-ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ


19 NOV 2011

Հ Ե Ք Ի Ա Թ Ե Ւ Ե Ր

ԺՈՂՈՎՐԾՈՒԹԻՒՆ

Տիգրանակ Դահլիսարդեան

## ՀԱՅԵՐՆԻ գիրք



У ч. Типографія К. Мартirosіанца.

Большая Банкская № 5

1902

## Հ Ա Խ Թ Զ Ի

(Երաժշկան բարբառով)

Սւալ ժամանակին ըլնում ա չինում մի մարդ,  
մի կնիկ: Իդ մարդը չութչի ա ըլնում: Դրանք ունենում  
են մի մինուճար տղայ:

Օրէն մի օրը էդ չութչին չութը վեր ա ունում,  
էթում հանդը չութ անելու: Չութ անելիս ըիրգան չթի  
սամիքը կոտրվում ա. մնում ա մաթալ, էլ չի կարում  
չութ անի, փօր-փօշման եղ ա դառնում, գալի տան:  
Կթում ա իրա ընկօրտանցը խմաց ա տալի թէ՝ էգուց  
էկէք իրար հենայ էթանք մէշէն, սամու փէտ բերենք:  
Չութչու տղէն էս ու լմանում ա, գալիս ա, հօրն  
ասում.

—Այ հէր, մի էթայ, փորձանք կը գայ գլուխդ. ֆլան  
ըը, ֆլան վախտը ընենց մի անձրև պտի գայ, ընենց  
դի ըուք ու բօրան պտի անի, որ Աստօծ փրկի, աղատի:  
—Այ որդի, ասում ա հէրը, ախար մնց կըլնի, խալ-

«Ժանօթ, «Չութչի», «Ռւրշի հմար ֆոր փորողը ինքը կ'ընկնի  
ընց», «Աղդիակ», «Սուտ հէքաթ» և «Քառասուն հարամի»  
բիաթները մեզ պատմել է յարգելի օրիորդ Ածխին ՅՈՎ-  
ՆԻՍԵՑՆՅԼ, որը բնիկ վաղարշապատցի է:

լվին ես եմ իմաց տուէ, գլխահան արէ—ես որ չ'էթամ՝  
ամօթ չի:

—Այ հէր, ասում ա, քու ինչ բանն ա, ես նրանց  
ջուղաբը կը տամ, դու իրիկունը թէք ընկի, քնի:

—Այ որդի, ասում ա հէրը, որ ասում ես էլ ինչ  
ասեմ. թող քու ասածն ընի:

Իրիկունը թէք ա ընկում, քնում: Էն գլխէն չը լիկ  
հա չըլսկ, չը լիկ հա չըլսկ, թը լիկ հա թը լիկ—դուռը ծե-  
ծում են: Տղէն սուս ու փուս վեր ա կենում, չուխէն զը-  
ցում վրէն, դուս գալի:

—Ո՞վ էք, ձէն ա տալի:

—Մենք ենք, ասում են, դուռը բաց արա:

Տղէն դուռը բաց ա անում, տենում իրա հօր ըն-  
կերտինքը:

—Հէրդ տանն ա, հարցնում են:

—Բա չէք ասի, ասում ա, հէրս էրէկ իրիկուն ամեն  
բան հազրէ, դրել էր խորչինը, համայ բիրդան հիւան-  
դացաւ. էս սհաժին էլ հրէն թէք ընկած ա, որ ասես  
յուշ չը կայ վրէն: Բան չը կայ, ասում ա, դուք էս հետ  
դնացէք, մըն էլ որ էթալու կ'ընէք՝ կը գալ:

Տղէն դրանց ջուղաբ ա անում, ինքը թողում ա, դա-  
լի տուն: Հէրը հարցնում ա.

—Ա՞լ որդի, հը՛, ընկօրտանցս ճամփու դրի՞ր:

—Հա, ասում ա, ճամփու դրի. դու արխէին թէք  
ընկի, քնի:

Անց ա կենում մի օր, էրկու օր, իմեք օր, մախլա-  
սի մի շաբաթ, դրուստ որ էդ տղի ասած օրը ընենց  
մի բուք ու բօրան ա անում, ընենց մի անձրէ ա գալի, որ  
տանցի դուսէ էկողի բերան-մերանը կանում էր իրար: Մի քանի  
տանցի դուսէ էկողի բերան-մերանը կանում էր իրար:

գեղը, ջուղաբ բերում թէ՝ ըսենց, ըսենց, ըսենց բան,  
ֆլան օրը լնենց մի բուք ու բօրան արեց, ընենց մի  
անձրէ էկաւ, ընենց մի ալէկործում արեց, որ իրա ըն-  
կերտինքը քօմմայ փէտացան. ինքն էլ մի հալոլ պրծել  
էր, վէ կացէ, էկէ, անջախ իրան դցէ զեղը: Էդ չուժչին  
էս բանը որ իմանում ա վեր ա կենում տղի ջուխտ թու-  
շը պաշում:

—Զօրանաս, այ որդի, ասում ա. դու ինձ պրծտ-  
ցըիր էդ զուլումիցը. դու չը ընէիր, ես էլ նշանց հեննալ  
ֆողէց ֆողի պտի կորչէի:

Տղէն ըսենց մի քանի հետ հօրը փորձանքից ազա-  
տում ա: Դրանց գեղի կշախն մի մենծ զետ կար. էդ զե-  
տի զրաղին դրանք ֆող ունէին. օրէն մի օրը հէր ու  
տղայ վէ կացան գնացին էդ ֆողը վարելու: Դրանց զե-  
ղիցը էդ օրը մի քանի ջահէլ ջուկուլ վէր ին կացէ, զը-  
նացէ էդ գետը ձուկ կալնելու: Տենում են, ըհ՛ը, հրէն  
թագաւորը իրա նազիր, վէզրի հեննալ էկաւ ըտերանք  
ման գալու: Էդ թօռչքը իրեք լաւ ձուկն ին կալէ. բե-  
րում են, տալի թագաւորին վէշքաշ: Թագաւորն էլ վեր  
ա ունում, տալի նազրին.

—Ա՞լ, ասում ա, էս ձկները տար, տու աղջկանս.  
դաթի հիւանդ ա, բալի սիրտն ուզում ա. թող խաշիլ  
տայ ուտի:

Էս նազիրն ա, ձկները վեր ա ունում, բերում թա-  
գաւորի ամարաթը. դնում ա մի էլծաթէ սինու մէջ,  
տանում ա, տալի թագաւորի աղջկանը: Աղջիկը որ տե-  
նում ա, հարցնում ա.

—Էդ ձկները էդ են թէ որձ:

—Թագաւորի աղջիկը սաղ ընի, որձ են, ասում ա  
նազիրը:

— Թէ՞ն տարէք, կորցրէք, ասում ա աղջիկը. չէք դիտայ, որ ես ըսկի որձեղէնի երես չեմ ուզում տենամ, որ մնաց ուտեմ:

Զկները էս խօսքը որ լսում են, իրեքն էլ վեր են կենում, պոչների վրէն կանում, ծիծաղում, էլ եղ շըրբիալէն վեր ընկնում: Թագաւորի աղջիկը, նազիրը քօմմայ մնում են արմացած, թէ էս ինչ բաս ա: Նազիրը վեր ա ունում էդ ձկները, տանում դնում մի տոլար, պահում. ինքն էլ վեր ա կենում, էթում թագաւորին մին մին նազլ անում թէ՝ ըսե՞նց, ըսե՞նց բան: Թագաւորը էս որ լսում ա, բերանը մնում ա բաց: Եննայ նազրին հրամայում ա.

— Տար, ասում ա, էդ ձկները մի թագուն տեղ պահա. ես, ոնց ըլնի, պտի իմանամ էս ինչ բաս ա, էդ ձկները ին ծիծաղում:

Թագաւորը եննայ եղ ա դառնում սուս ու փուս իրա ամարաթթ: Անց ա կենում մի վախտ, մի ամիս, էրկու ամիս, իրեք ամիս, մախլասի մի տարի, օրէն մի օրը թագաւորի աղջիկը կանչում ա նազրին:

— Կ'էթաս, ասում ա, սաղ մեր մհալը ման կը դաս, կը հարցնես. կը տենաս որդէ իմ անումը շեն տալի, ինձ չեն ճանանչում, կը դաս կ'ասես. որ ես ընդէժարդի էթասմ:

— Լաւ, ասում ա նազիրը: — Շամփի թագարէք ա տենում, վէ կենում, ընկնում ճամփայ:

Էթում ա, էթում ա, էթում ա, շատն ու քիչն Աստօծ դիտայ, հասնում ա մի գեղ: Դուս ա դալի հանդը, տենում հրէս մի ծեր մարդ, մըն էլ մի ջահէլ տըղալ չութ են անում: — Էթամ նրանց կուշտը, ասում ա, մի քիչ դնջանամ, հացմաց ուտեմ, էլ եղ վէ կենամ է-

թամ իմ ճամփէն: Էդ չութ անողն էլ էն չութչին աընում, որ մի իմաստուն տղայ ա ունենում: Էդ իմաստուն տղէն թագաւորի նազրին որ տենում ա, հօրն ասում ա.

— Այ հեր, հրէս տենում ես, թագաւորի նազիրը գալիս ա, որ գայ քեզ բան հարցնի՝ ջուղաբ տու. մարդա, որ ընձ էլ բան հարցնի, ես ինչ ասեմ՝ չը բարկանաս:

— Լաւ, ասում ա. այ որդի, դու զիտաս, ինչ ուզում ես ասա:

Թագաւորի նազիրը գալիս ա, հասնում դրանց:

— Բարի աջողում, բարի, ասում ա նազիրը. ինչ կայ, ինչ ըլ կայ. քէֆներդ, հալներդ. ոնց էք. ինչ էք անում:

— Քանսաղութիւն, թագաւորի նազիրը սաղ ըլնի, ասում ա չութչին. կանք, ապրում ենք, էլի: Խէր ըլնի, բա դու էդ ուր ես էթում, հարցնում ա:

— Էթում եմ մեր մհալը պտտեմ, տենամ ինչ կայ, ինչ ըլ կայ. թագաւորիցը խալխը հօ դանգատաւոր չեն:

— Թագաւորի նազիրը սաղ ըլնի, ասում ա չութչու տղէն. դուր ես չարչարում. ինչքամ էկել ես տասն էսքամ էլ էթաս—հլա թագաւորի աղջկայ անումը կայ. դուր տեղը մի էթայ, եղ դառ, դնա քու բանին. դու էլ ես մեղք, ձիդ էլ:

Թագաւորի նազիրը տղի էս ջուղաբը որ լսում ա, մնում ա զարմացած. փօր-փօշման եղ ա դառնում, գալի: Փալիս ա թագաւորի աղջկանը մին մին նազլ անում թէ ըսե՞նց, ըսե՞նց, ըսե՞նց բան, Փլան տեղը մի չութչի կար, նրա տղէն ըսե՞նց ջուղաբ տուեց:

Թագաւորի աղջիկը էս որ լսում ա, մնում ա միտք անելօն, թէ էս ինչ բաս ա, էն տղէն խի պտի ընենց ասէր: Անց ա կենում մի քանի վախտ, էս թագաւորի

աղջիկը դաստահիւանդ ա տալի: Աշխարքումը ինչքամ գրուին հէքիմ ա ըլնում՝ թագաւորը բերիլ ա տալի—աղջիկը չի լաւանում: Որէն մի օրը էս աղջիկը հօրը կանչիլ տուեց իրա կուշտը.

—Թագաւորը սաղ ըլնի, ասեց. բա չես ասի՞ էս գր-  
շեր էրագումս տեհայ՝ մեր տէրտէրն էկաւ, ասեց.—Ա՛  
որդի, քու գեղ ու դարմանը ինչ մենծ բան ա, որ չէք ա-  
նում. քանի՞ ամիս ա՝ հիւանդ, տեղ ու բարձով թէք ըն-  
կած ես. չէ դու էլ մեղք ես, ջահէլ-ջիւան ես, աչքդ  
մուրազի ա: Ֆլմն գեղումն, ասեց, մի չութչի կալ, էդ  
չութչին մի մինուճար տղայ ունի, պտի էն տղին մօր-  
թէք, արինը խմես, որ լաւանաս:

—Ա՛ որդի, ասում ա թագաւորը, ախար ես ոնց  
բերիլ տամ էդ տղին. իլլաքիմ որ մինուճար ա:

—Թագաւորն ապրած կենայ, ասում ա աղջիկը, թէ  
ուզում ես սաղանամ՝ պտի բերիլ տաս, թէ չէ հօ՞ դու  
գիտաս:

Թագաւորը միտք ա անում, միտք ա անում, տե-  
նում ա որ ճար չը կայ, պտի էն տղին բերիլ տայ, բալի  
աղջիկը լաւանայ: Կանչում ա իրա նազրին:

—Մի բեռը ոսկի վէ կ'ունես, ասում ա, կ'էթաս ֆը-  
լան գեղը. ընդէ մի չութչի կալ, նա մի տղայ ունի, էդ  
բեռը ոսկին կը տաս նրան, տղէն կ'առնես, կը բերես, որ  
մորթենք, աղջիկս նրա արինը խմի, լաւանայ:

Նազրիր մատը կծում ա: Թագաւորին գլուխ ա տա-  
լի, դուս դալի: Յէքսի օրը ճամփի թագարէք ա տենում,  
վէ կենում, ընկնում ճամփայ:

Չութչու տղէն դէ խմաստուն էր էլի, էս բանը  
իմանում ա: Փալիս ա հօրը ասում.

—Ա՛ հէր, թագաւորը իրա նազրին դրկել ա, որ

դայ քեղ մի բեռը ոսկի տայ, ինձ առնի, տանի թագա-  
ւորի աղջկայ հմար: Որ կը դայ, ասում ա, մի վախի,  
ոսկին մառ, ինձ տու, տանի: Արխէլին կաց, ասում ա, որ  
ասես ինձ բան չիլնի. ոնց ըլնի՞ սաղ սալամաթ էլ եղ  
կը դամ:

Թագաւորի նազրին ա, դալիս ա, դալիս ա, դալիս  
ա, շատն ու քիչն Ասուծ գիտայ, հասնում ա թագաւորի  
ասած գեղը: Արան, նրան հարցնելոն էդ չութչու տունը  
գտնում ա, էթում նրա կուշտը.

—Բարով, բաբի, ասում ա նազրիրը:

—Բարով, Ասու հազար բարին, ասում ա չութչին:  
Խէր ըլնի, իս՞ ես էկէ, հարցնում ա:

—Էկել եմ, ասում ա, տղիդ տանեմ, թագաւորը ու-  
գել ա. Հրէս էս մի բեռը ոսկին էլ քեղ փէշքաշ ա դրկէ:

—Տար, փէշքաշ ա, ասում ա չութչին. տղի մա-  
լիաթն ինչ ա որ թագաւորիցը խնայեմ:—Ասում ա, տղի  
կուռը բռնում, տալի նազրին:

Նազրին ա, մի բեռը ոսկին տալիս ա չութչուն,  
տղին քաշում թարքը՝ եալլայ: Փալիս ա, դալիս ա, շատն  
ու քիչն Ասուծ գիտայ, հասնում ա թագաւորի ամարա-  
թը: Նազրիր չի զմշում, որ էդ թագուր զեօզալ տղին  
մորթեն. էլ չի տանում թագաւորի կուշտը, բերում ա,  
իրանց տանը պահում: Էդ նազրի կնիկը տենում ա՝ մար-  
դը դառը-տխուր նստած ա:

—Ա՛ մարդ, հարցնում ա. իս՞ ես ըտենց մալուլ-  
մուշկիւ նստէ, ասա տենամ դարտդ ինչ ա:

—Տենում ես էս տղին, այ կնիկ, ասում ա նազրիր.  
պտի մորթենք, որ ինչ ա թագաւորի թաբառուկ աղջիկը  
որա արինը խմի, լաւանայ:

—Տնաշէն, ասում ա կնիկը. էդ ինչ ա, որ դրա

հմար դարտոտէ, վարամնոտէ նստել ես. Հրէն մեր հարեանի տղին էս մի սհաթշ չլինի, որ տարան թաղեցին, եղ դառան. էս զշեր գնա նրա գերեզմանը քանդա, հանա, գլուխը կտրա, բէ. ենսայ մի ոչխար մորթա, արինը լցրա մի ամանի մէջ, էս տղի շորերն էլ արնոտ արա, տար թառսորի աղջկանը շանց տու, ասա՝ մորթել եմ, արինն էլ հրէս բերէ. նրանք շատ գիտան թէ էդ ընչի արին ա:

— Զօրանաս, այ կնիկ, ասում ա, լաւ խելք սարպացրիր. ըտենց էլ կանեմ:

Էդ նազիրը կէս զշերին վեր ա կենում էթում գերեզմանները, ման գալի, կնկայ ասած էրեխի զերեզմանը գտնում, քանդում, հանում, գլուխը կտրում վրիցը, էլ եղ գնում տեղը, ֆորում ու եալլայ դպա տուն ա կրնկում: Պալիս ա տուն, մի ոչխար ա մորթում, մի խոր աման լիքը էդ ոչխարի արնիցը վեր ունում, էդ տղի հին-մին շորերը հանում ա, թաթխում արնի մէջը, առաւօտը զշերով-զշերհանայ էդ շորերն ու գլուխը վեր ա ունում, տանում դուզ թագաւորի աղջկայ կուշար:

— Թագաւորի աղջկէր սաղ ըլնի, ասում ա, էրեխուն ինչ-քամ ըշտեցի, հենսէն կռուեցի՞ ճար, իլլած չ'էլաւ, չ'էկաւ. ես էլ վէ կալայ ճամփին մորթեցի. — Հրէն էս արինը, էս զլուխը, ըս էլ շնրերը:

Թագաւորի աղջկէր վեր ա ունում արինը խմում, ասում. — Թխայ, անջախ մի սրբած հովացաւ: —

Անց ա կենում մի վախտ, օրէն մի օրը թագաւորը կանչում ա իրա նազիրն:

— Մի շաբաթ քեզ մհուլ, ասում ա. պտի իմանաս՝ էն ձկները, որ բերիր տուիր աղջկանս՝ խի ին ծիծաղում, դրանով ինչ ին ուզում ասի:

— Աչքիս վրէն, թագաւորը սաղ ըլնի, ասում ա նա-

զիրը: — Թագաւորին գլուխ ա տալի, թողում դուս գալի: Էթում ա իրանց տունը, էլի դառը, տխուր, նօթերը կիտած նստում ա: Չութչու տղէն էս որ տենում ա, հարցնում ա.

— Բինձա, ասում ա. խի ես ըտենց նօթերդ կիտէ. ասա տենամ դաբտղ ինչ ա:

— Է՛յ, այ որդի, ասում ա. էկ քեզ ասեցի. իմ դարադին ինչ դարման պտի անես:

— Է՛լի հենց, ասա տենամ, բալի իմ խելքն էլ ամի բան կտրում:

Նազիրը ըստէ նստում ա մին մին տղին նազլ անում թագաւորի հրամանը: Տղէն էս որ լսում ա, ասում ա.

— Էդ ինչ մի դժար բան ա, որ դրա հմար դարտ ես անում. մի վախի, ես դրա ջուզաբը կը տամ:

— Ղօթ, հարցնում ա նազիրը:

— Ղօթ, ասում ա տղէն. թագաւորը թող ինձ կանչի, էն ես դիտամ ինչ որ կ'ասեմ:

Նազիրը էս որ լսում ա, ուրախանում, աշխարհվ մին ա ըլնում: Յէքսի օրը էթում ա թագաւորին գլուխ տալի, ընդէ կաննում:

— Հը, ինչ խաբար ա, հարցնում ա թագաւորը. ինչ որ հարցրել ի՛ դտար. թէ չէ:

— Հա, թագաւորն ապրած կենայ, ասում ա, դտայ:

— Գլ' ասա տենամ, ասում ա թագաւորը:

— Թագաւորն ապրած կենայ, ասում ա. ես չեմ ասուը. մեր տանը մի ջահէլ տղայ կայ, նա պտի ասի. թէ կը հրամայս, էթամ բերեմ:

— Ինա կանչա գայ, ասում ա թագաւորը:

Նազիրը էթում ա էն իմաստուն տղի կոնիցը բըռ-

նում, բերում թագաւորի ամարաթը: Տղէն ջուխտ ձեռը  
դնում ա զօշին, խորը գլուխ տալի, ընդէ կաննում:

— Թէ ասա տեսամ. իմ ջուղաբը դժւ պտի տաս:

— Հա, թագաւորն ապրած կենայ, ասում ա տղէն.  
որ ասեմ՝ հօ չես փոշմանի:

— Զէ, չեմ փոշմանի, ասում ա թագաւորը:

— Ասեմ, թագալան հարցնում ա:

— Ասա, ասում ա թագաւորը:

— Ասեմ:

— Ասա:

— Լաւ, թագաւորն ապրած կենայ. հլա կայ մի  
հէքաթ ասեմ, եննայ քու ջուղաբը կը տամ:

— Ասա, ասում ա թագաւորը:

\*Կըլնի չիլնի, ասում ա, մի թագաւոր: Եդ թագա-  
ւորը մնչ տղայ ա ունենում, մնչ աղջիկ, մախլասի ըսկի  
զադ չի ունենում — ինքն ա ըլնում մի տուղի-դուշ: Ուր  
էթում ա, ինչ անում ա՝ աղոք էդ տուղի-զըթ հեննայ  
ա մասլահաթ տենում: Օրէն մի օրը թագաւորը հաց ու-  
տելիս ա ըլնում, էդ տուղի-դուշն էլ փանջարումը նստած  
ա ըլնում, մին էլ տենում ա՝ մի ուրիշ տուղի-դուշ թր-  
ռաւ, էկաւ իրա զշի կուշտը, կտուցը նրա կտցին քսեց,  
շնքովը փաթթուեց, էրկուլ էլ լաց էլան, եննայ ծի-  
ծաղացին. էն նոր էկած դուշը մի քիչ կացաւ, թռաւ,  
դնաց: Թագաւորը էս որ տեհաւ, մնաց արմացած:

— «Ին ինչ դուշ էր, հարցրեց թագաւորը. ընչի վր-  
բէն լաց էլաք ու վերջը ընչի վրէն ծիծաղացիք:

— «Թագաւորն ապրած կենայ, ասեց տուղի-դուշը,  
էն զուշը իմ աղպէրն էր. էկաւ ասեց՝ հւըներս մեռել ա:  
ին, սիրտ էր, ջիղեար էր, մռմռաց, լաց էլանք: Եննայ  
էլ ասեց՝ նշան իմ դրուէ, թագաւորիցը իզին առ, արի

հարսանիք: Պի՛, աղպէրս էր, էս որ իմացայ՝ ուրախա-  
ցալ, խնդացինք, ծիծաղացինք: Թագաւորն ապրած կենայ,  
հմի թէ իզին կը տաս՝ կէթամ, թէ չէ հօ՛ չէ:

— «Դնա, ասեց թագաւորը. համայ թէկ եդ գառ:

«Տուղի-դուշը թագաւորին գլուխ ա տալի, թռնում,  
էթում: Անց ա կեննում մի օր, էրկու օր, իրեք օր, մախ-  
լասի մի շաբաթ, օրէն մի օրը էդ տուղի-դուշը եղ ա  
գառնում, գալի: Պալիս ա թագաւորին գլուխ ա տա-  
լի, կտցիցը մի գունդ թռողթ ա վէ գցում: Թագաւորը  
վեր ա ունում, բաց անում, տենում ինչ — իրեք հատ  
խնձորի կորիք: Կանչում ա իրա կատեպանին, թամբահ  
թամբահի վրէն անում թէ՝ էս իրեք կորիզը կը տանես  
ընենց բելլու տեղ կը ցանես, որ դուշ, հաւ, զադ ըլ մօ-  
տանայ: Կատեպանը թագաւորին գլուխ ա տալի, կորդ-  
ները վեր ունում, տանում մի տալիայ, ոտից հեռու տեղ  
ցանում, ոնց որ պէտքն էր՝ ջրում, մուղաթ կեննում: Անց  
ա կեննում մի քանի վախտ, մի ամիս, էրկու ամիս, իրեք  
ամիս, մի տարի, էրկու տարի, իրեք տարի, էդ խնձորի  
կորպները դուս են գալի, ամեն մինը մի մի եքալ ծառ-  
դառնում, էնքամ էլ խնձոր են տալի, որ էլ հալ ու հէսաբ  
ըլ կար: Օրէն մի օրը թագաւորի կատեպանն ասում ա՝  
էթամ տենամ խնձորները հասել ա թէ չէ: Վեր ա կե-  
ննում, էթում լիգին. դէս ա ման գալի, դէն ա ման զա-  
լի, վերջը զալիս ա էդ խնձորենքանց տակին կաննում.  
տենում ա կարմրել են, էն ա հա՝ հասնելու վրա են. վա-  
րառը ա անում, տենում գեննին մի մենծ կարմիր խըն-  
ձոր վեր ընկած: Վեր ա ունում, ասում ա՝ տանեմ թա-  
գաւորին շանց տամ: Դու մի ասի՞ էդ խնձորը օձը եա-  
զուել ա: Կատեպանը էթում ա թագաւորի ամարաթը,  
թագաւորին գլուխ տալի, ընդէ կաննում:

— «Թագաւորն ապրած կենայ, ասում ա. ինձորները հասնելու վրա են. էս մինը ծառի տակին դտայ, վէ կալայ բերի. առ տես լաւն ա:

«Թագաւորը խնձորը ձեռփյն առնում ա, տապակ անում, հէնց ուզում ա դնի բերանը, նազիր, վէզիրը չեն թողում.

— «Թագաւորն ապրած կենայ, ասում են. բալի դեղած ա, աղաք մի ուրշի տու ուտի՛ ենայ գու կէ:—

«Նազիր, վէզիրը մի ֆորթ են բերիլ տալի, էդ խնձորը դցում աղաքը: Ֆորթը խնձորը ուտիլու բաշտան միջցը տրաքում ա, վեր ընկնում: Թագաւորը էս որ տենում ա, հերսոտում ա. էն սհաթթը տեղիցը վեր ա կենում, տուղի-զշի ճիտը կտրում, դցում էն դիհը. ենայ նազիր, վէզրին հրամայում ա՝ իրա լիքու չորս դիհը մենծ հասար քաշեն, որ մարդ, մադաթ չը մննի էն խնձորիցն ուտի:

«Էդ գեղումը մի նախրչի ա ըլնում, ունենում ա մի կնիկ: Էդ նախրին իրա կնկանը ըսկի օր չէր տալի. Առ սու իրան օրը, գշերով-գշերհանայ վեր էր կենում, կնկանը լաւ ջարդում, ծեծում, նոր նախրը տանում հանդը. ընենց էլ իրիկունը, որ եդ էր դալի, էլի թագավան ծեծում, սալզարդ անում, նոր հաց ուտում, թէք ընկնում քնում: Էդ իսեղ կնկայ ճարը կտրում ա, գշեր, ցերեկ սու շիւան ա անում, մնում ա գլխի վրէն մոլորած թէ՛ էդ մարդի ձեռփյը ոնց պլծնի: Մի օր էլ «որ դանակը ոսկորին ա հասնում», ասում ա՝ ոնց անեմ, որ մեռնեմ, էս աշխարքիցը պլծնեմ, րիրդան միտն ա ընկնում, որ թագաւորի բաղչի խնձորները եաղուած են, որ մարդ ուտի, ալբիալը կը մեռնի: Մարդը որ էթում ա հանդը, ինքն էլ վեր ա կենում, էթում դպա թագաւորի բաղ-

չն: Բաղչի չորս դիկը ժան ա գալի, դէս ա էթում, դէն ա էթում, տենում ա՝ հրէս մի խոռուակ: Ուսուլով էդ խոռուակովը մննում ա բաղչն. դէս, դէն ա մտիկ տալի, տենում ա մարդ-մադաթ չը կայ. վազ-վազ մի խնձոր քաղում ա, էլ եդ դուս ա գալի, էթում: Էթում ա, չոլի մէջտեղը կաննում. ասում ա՝ ըստէ ուտեմ, որ մարդ չ'իմանայ: Ուտում ա, պլծնում, տենում ա ինչ-հրէս դհա ջահէլացաւ, դառաւ ոնց որ մի տասնըհինգ տարեկան աղջիկ: Խեղճ կնիկը մնաց մոլորած, զլխին վայ տալօն:—Ես կերայ, ասեց, որ մեռնեմ, պլծնեմ էս աշենարքիցը, դհա ջահէլացայ:—Սուս ու փուս գալիս ա, իրանց դռան աղաքին կաննում: Դրիկունը մարդը տուն ա գալի, տենում ա դռանը մի ջահէլ, սիրուն աղջիկ կաննած ա. կնկանը չի ճանանչում, մննում ա տուն, քունջ ու պոճախ ա ընկնում, տենում ա կնիկը տանը չի: Էթում ա հարեւաններին ա հարցնում, նրանք էլ կնկայ տեղը չեն իմանում. վերջը ճարը կտրած, գալիս ա էդ աղջկանն ա հարցնում:

— «Աղջի, ասում ա, էս տան կնկանը հօ չես տեհէ:

— «Ես եմ, ասում ա, էս տան կնիկը. ինչ ես ուղում:

— «Զէ, ջանրմ, ինչ ես ասում. իմ կնիկը եաշն առած կնիկ էր, գու ջահէլ աղջիկ ես:

«Աղջիկը երդում, կրակն ա ընկնում թէ՛ ես քու կնիկն եմ, որ քու կնիկն եմ—մարդը չի աւատում:

— «Թէ՛ որ իմ կնիկն ես, ասում ա մարդը, արի էթանք տուն:

— «Էթանք, ասում ա:

«Կնկայ կրնիցը բոնում ա, քաշ տալի նեքսեւ: Տանում ա տուն, տուր թէ կը տաս, տուր թէ կը տաս, մի

լաւ որխկում ա, սալջարդ անում, վէ զցում, նոր ինքը  
թէք ա ընկնում, քնում: Էս խեղճ կնիկը մնում ա զըլ-  
խին, ոտին տալօն. — Ես եաշով կնիկի ի, ասում ա, մարդս Առ-  
սու իրան օրը ծեծում էր, հմի ջահէլացայ, դհա բէթար  
ա ծեծում. չեմ գիտայ ինչ անեմ, որ ջուրն ընկնեմ, որ  
պրծնեմ նրա ձեռիցը: — Առաւօտը որ լիսանում ա, մարդը  
նախիրն աղաքն ա անում, էթում հանդը, կնիկը մտքի  
հեննայ ա ընկնում, միտք ա անում, միտք ա անում.  
վերջն ասում ա. — Իթամ թագաւորին գանգատ, աղան-  
չաք անեմ, մարդիս կանչի, խրատի, բալի ինձ ըլ ծեծի:  
— Թառը-տխուր վեր ա կենում, էթում դուզ թագաւորի  
ամարաթը: Իթում ա թագաւորի խնամաքարի վրէն  
նստում: Թագաւորի նազիր, վէզիրը դուս են գալի հարցնում.  
— «Ու ինիկ առաջ է լուս ու առաջ է լուս».

— «Ո՞ւ կնիկ, ասում են, բնու եւ առաջնում.

— « իկել եմ թագաւորի կոշտը դանդատ, ասում ակնիկը:

«Կազիր, վեզիրն էթում են թագաւորին իմաց տալի թէ՝ մի ջահէլ, սիրուն կնիկ էկել ա, ուզում ա քեղ տենայ. թաղանք գայ, թէ չէ:—Թողէք գայ, ասում ա թագաւորը. տենամ ինչ ա ուզում:—Էթում են կնկանը բերում թագաւորի կուշտը: Կնիկը թագաւորին զլուխ ա տալի ընդէ կաննում:

— «Այ կնիկ, ասում ա թաղաւորը. դարտի լնչ ա, ասա տեսնամ»:

«Խեղճ կնիկը նստում ա ըստէ մին մին, տեղը տեղին նազլ ա անում իրա գլխով անցկացածը, ոնց որ ես ձեղ նազլ արի: Թաղաւորը էս որ լում ա, մնում ա զարմացած:

— «Թիրուաստ ես ասում, որ իմ բաղչի խնձորիցը կերպ, ջահէլացար, հարցնում առ թագաւորը:

— «Թիմուստ, թագաւորն ապրած կենալ, ասում ակնիր:

«Թագաւորը էն սհամթը նազիր, վէզրին դրկում ահանդը, որ էթան էն նախըզուն կանչեն, բերեն: Էթում են, գտնում, կանչում, բերում թագաւորի կուշտը: Եննայ մարդ ա զրկում իրա բաղչի խնճորիցը բերիլ տալի. որ բերում են, տալիս ա նախըզուն, ասում ա՝ կէ: Նախըզին աղաք չեմ ու չում ա անում, չի ուղտում ուտի. համայ թագաւորը որ զօռում ա, վեր ա ունում, ուտում: Ուտում ա թէ չէ, ջտհէլանում ա, դառնում տասնըհինդ տարեկան տղայ: Թագաւորը էս որ տենում ա, մնում ա սառած նախըզու ու նրա կնկայ ելեսին մտիկ անելօն. շատ ա գլխին վայ տալի, դարտ անում, համայ էլ ուր, —բանը բանից անց էր կացէ: Նախըզուն էլ մի լաւ խըրատում ա, ասում ա՝ կնկանը չը ծեծի, սէրով ապրի հենիէն ու էլ եդ ճամփու դնում իրանց տունը»:

—Թաղաղաւորն ապրած կենաչ, ասում ա իմաստուն տղէն. հմի տես, անց որ էդ թաղաւորը փօշմանել ա, ընենց էլ գու կը փօշմանեա որ ասեմ խի ին ծիծաղում էն ձկնելոր:

— Զէ, ասում ա թագաւորը. չեմ փօշմանի, Ն ասա:

—Անա, ասում ա թագաւոր:

—Ասեմ, հարցնում ավաշի

— Ասա, ասում ա թագաւորը

— Բաս որ ըտենց ա, թաղաւ

Քու թագաւորութիւնը իրեք սհաթ պտի տաս ինձ:

— Գող վիշշաբաշ, ասում ա թագաւորը:

Էն սշաթը թախտիցը վեր ա գալի, տղին նստացնում իրա տեղը թագաւոր: Էդ տղէն ա, թագաւորին

իրա կշտին նստացնում ա, հրամայում ա նազիր, վէզիրը, ամարաթի մարդիքը քօմմայ թօփի ըլնեն: Բիրադի կիտում են, թագաւորի չորս դիմկը նստոտում: Եննայ տղէն հրամայում ա, որ թագաւորի աղջիկը իրա դարաւաշներին առնի, գայ: Թագաւորի աղջիկը դարաւաշներով վեր ա կենում, գայի ամարաթի մէջտեղը կանուում:

—Աղջի, ասում ա հէրը, միտդ ա, որ ֆլան տարին հիւանդ իր, սիրտդ ձուկն ուզեց, իմ նազիրը գնաց իրեք ձուկը բերեց, համայ դու չը կերար:

—Թագաւորն ապրած կենայ, ասում ա աղջիկը, դու չես գիտայ, որ ես որձեղէնի երես չեմ ուզում տենամ, ուր մնաց թէ ուտեմ:

Իմաստուն տղէն էս որ լսում ա, հրամայում ա թագաւորի աղջկայ դարաւաշներին տկլորացնեն: Թագաւորի աղջիկը աղաք ա գալի, չի թողում.—Ո՞նց կ'ըլնի, ասում ա. աղջիկ-խիզան են, էսքամի աղաքին ո՞նց շորները հանեն:

—Եդ քու բանը չի, ասում ա թագաւորը: Հանէք շորները, հրամայում ա:

Հանում են լինչ տենում—դարաւաշները քառասունն էլ տղայ են: Թագաւորը, նազիր, վէզիրը քօմմայ մնում են սառած, իրար երեսի մտիկ անելոն:

—Դէ հմի տեհար, թագաւորն ապրած կենայ, ասում ա իմաստուն տղէն. հմի իմացար խի ին ծիծաղում էն ձկները:

—Ջանլաթ, ձէն ա տալի թագաւորը:

Ջանլաթները էն սհաթը գալիս են ընդէ կանում:

—Էս սհաթին քառասնի գլուխն էլ կտրէք, հրամայում ա թագաւորը:

Ջանլաթները քառասնի գլուխն էլ թոցնում են:

Եննայ թագաւորը հրամայում ա իրա աղջկանը տանեն գցեն մի հացատուն, օրը մի կտոր հաց տան, քանի սաղու կենդանի ա՝ ընդէ մնայ, արևի երես չը տենալ: Թագաւորը վեր ա կենում էդ իմաստուն տղի ճակատը պաշում, մի քանի բեռը ոսկի ա տալի, էլ եդ ճամփու դնում իրա հօր կուշտը:

Ասսանից իրեք ինձոր վեր ընկաւ.—մինն ասողին մինը ասիլ տուողին, մինն էլ անկաջ դնողին:

— Այս որդի, ասում ա մէրը, գծուել ես, ցնթել ես, ինչ  
ա. մենք ենք էս մի եղը, ըն էլ մորթենք։ Ես, ասում  
ա, հնձուրի հացը հաղթել եմ, հրէս վէ կալ, տար, էլ  
եղը իի ես մորթում։

— Զէ որ չէ, ասում ա Աղդելակը. պտի մորթեմ որ  
պտի մորթեմ։

Մէրը ինչքամ աղաշանք, պաղատանք ա անում,  
կռւում ա, բշտում ա, ճար, իլլաճ չինում։ չղէն էթում  
ա, եղը վէ գցում, զանակը քաշում մորթում, քերթում,  
կաշին ջօկ ծալում, վէ դնում, մխր մանդր կտորում, են-  
նայ էթում ա շշերը բերում, շարում, տանում թունդիրը  
կախ անում, որ խորովի՝ էն սհաթը հէրը գուգուալէն,  
անծելօն տուն ա մննում։

— Ոտդ կոտրի, ոտդ, ասում ա հէրը. ես քեզ հացի  
զրկեցի, էսքամ վախտ ինչ էլար. էն խեղճ հնձուրները  
սոված կոտրուեցին քու ճամփէն պահելօն։

Տղէն էդ որ լսում ա, ձեռի շամփրները զցում ա  
թունդիրը, մաշէն թունդրի կշտին ա ըլնում, մաշովը  
թունդրեցը մի կրակ ա վեր ունում ու եալլայ դպա արտն  
ա կրնկում։ Հէնց որ հասնում ա արտը, հնձուրներին ձէն  
ա տալի.

— Գուս էկէք, ասում ա, որ արտը կրակում եմ. հրէս  
թագաւորը իրա զօշնովը գալիս ա, ձխնիքը պտի անեն  
մեր արտը ուտացնեն։

— Այ ջանըմ, այ զեօղը, ասում են հնձուրները, շատ  
էլ թագաւորը պտի ձխնիքը անի ձեր արտը, արածացնի,  
հօ սաղ արտը չեն ուտի, իսի ես կրակ տալի, բա քու  
հէրնը-մէրը մեղքը չե՞ն։

— Զէ որ չէ, ասում ա, պտի կրակ տամ, որ պտի  
կրակ տամ։ — Ասում ա ու կրակը զցում արտի մէջը։ Ար-

## ԱՂԴԻԼԱԿ

(Արարատեան բարբառով)

Աւալ ժամանակին ըլնում ա չիլնում մի մարդ,  
մի կնիկ։ Սրանք ունենում են մի մինուճար տղայ։ Էդ  
տղի անումը Աղդիլակ ա ըլնում։ Քրանք էլ շատ գառն  
աղքատ, քեասիպ, անճար են ըլնում. մի եղն են ունե-  
նում, մըն էւ մի էշ. դէ ուղապար մարդիկ ին, մի արտ էլ  
ունէին, վարում ին, ցանում, ասն հացն էլ ընդիան էր  
գալի, սրանով զլուխի ին պահում։ Հնձի վախտը էս մար-  
դը էթում էր խալիսի հմար փոխարայ բանում, որ նրանք  
էլ իրա արտը հնձնիս գայլին իրան օգտիկին։

Անց ա կենում մի օր, էրկու օր, իրեք օր, մախլա-  
սի մի շաբաթ, հունձն ընկնում ա. էս մարդը էթում ա  
միքանի օր խալիսի հունձն ա անում. վերջը սրէն գայլիս  
ա սրա արտին։ Թօփի են ըլնում մի տասը-տասնըհինգ  
հոգի, մննում են նրա արտը որ հնձեն։ Գալիս ա հացի  
վախտը, էդ մարդը Աղդիլակին զրկում ա տուն, որ հաց  
բերի հնձուրի հմար։ Աղդիլակը վաղէվաղ էթում ա տուն,  
մօլն ասում։

— Եանի, ափին ասում էր՝ մեր եղը մորթէք, խորո-  
ված արէք, հնձուրին հաց բերէք։

տը ալբիալը վոթվութում ա կպնում: Տղէն էլ էթում ա, արտի գլխին էշը կապած ա ըլնում, նիլնում ա ու եալլայ: Սրան թողանք ըստէ, դանք խաբար տանք սրա հօրիցը:

Խեղճ հէրը որ տենում ա տղէն եղը մորթել ա, մը-նում ա գլխի վրէն մոլորած: Ի՞նչ անէր, բանը բանից անց էր կացէ. հնձուրի հացը վեր ա ունում, որ ինքը տանիի: Հէնց դուս ա գալի քուչէն, հնձուրները գալիս են աղաքը:

— Հ'ը, իսէր ըլնի, հարցնում ա, էս վախտ խի՞ էք էկէ:

Հնձուրները ասում են՝ ըսե՞նց, ըսե՞նց բան. — Տղէդ էկաւ արտը կըակ տուեց, թէ թագաւորը իրա զօշնովը գալիս ա, պտի ձիանիքը անեն արտը, արածացնեն: Ինքամ ասեցինք. — Ա՛յ ջանը, այ գեօլը, մի անի, հէրդ մեղք ա — չէլաւ, անկաջ չ'արեց: Սալ արտը կըակ տուեց, ինքն էլ գլուխ առաւ, կորաւ: Մընք էլ մնալինք, ի՞նչ անէինք. վէ կացանք էկանք:

— Ա՛յ գետինը մննի, այ ոչ ու փուչ ըլնի, այ գրողը տանի նրան, ասեց հէրը բարկացած: Կիէք, ասեց, էկէք հաց կերէք:

Հնձուրները գալիս են տուն, նստում, հաց ուտում: Հաց են ուտում, պըծնում, վեր են կենում, էթում իրանց տնելը:

Սրանց թողանք ըստէ, դանք խաբար տանք Աղդիկիցը:

Աղդիկակն ա, էթում ա, էթում ա, հասնում ա մի դեղ ըտէ մութը գետինը կոխում ա. մննում ա էդ գեղը, մի քուչայ բռնում ա, էթում: Էթում ա, էթում, մի բաց

դուռ ա տենում, էդ դուռը ծեծում ա: Մի ջահէլ, սի-լուն կնիկ ընդիան դուս ա դալի:

— Հարսի, զնւրբան, ասում ա Աղդիկակը, ի՞նչ կ'ըլնի տեղ տաս, էս գշեր սրթար անեմ, էն բաշտէն վէ կը կե-նամ, կ'էթամ իմ բանին:

— Զէ, ասում ա հարսը, չիլնի. ես ջահէլ օղուշաղ, մարզս էլ գնացել ա առուտուրի, քեզ ո՞նց թողամ դաս մեր տանը քնես. խալին ի՞նչ կ'ասեն:

Ասում ա ու դուռը շըրըխկալէն քամակիցը եդ ա-նում, թողում, էթում իրա բանին: Աղդիկակը տենում ա կնիկը դնաց, մտաւ տուն, ինքն էլ ենուցը դուռը բաց ա անում, ուսուլով մննում հայաթը: Մննում ա, տենում չարդախումը թունդիրը վառած ա, թունդը կշտին էլ մի մենծ աթարի դէզ կայ: Ուսուլով էշը քաշում ա նեքսւ, դիզի ետևը կապում, ինքն էլ մննում ա դիզի բունը, տափ կենում:

Էդ կնիկն ա, գալիս ա թունդը վրէն լաւ լաւ կի-րակներ ա էփում, զազ ա տապակում, հալվայ ա անում, տանում, դռանը մի փէտէ զութի ա ըլնում, դնում էդ դութու մէջը, պահում: Կիրակները էփում ա պրծնում, եննայ բերում ա մի մենծ պղինձ ջուր ա լցնում, տանում թունդը բերնին դափարթմիշ անում: Մի քիչ անց ա կենում, տենում ա, ըն'ը, թըն'սկ, թըն'սկ՝ քուչի դուռը ծեծեցին: Կնիկը ափալ-թափալ էթում ա դուռը բաց ա-նում:

Աղդիկակը դիզի միջիցը վարաւուրդ ա անում, տե-նում մի ջահէլ, ջիվան, սիլուն տղայ հրէն կնկայ հեննայ մտաւ նեքսւ: Դու մի ասի՞ էդ տղէն էդ կնկայ սիրեկանն ա ըլնում: Կնիկը տղին աղաք ա անում, տանում տուն. նստում են, իրար հեննայ քաղցը մասլահաթ են անում:

Հենց էդ մասլահաթի վախտը քուչի դուռը էլի ծեծում են: Էդ կնիկը ալբիալը իմանում ա որ իրա մարդն ա: Ինչ անէր, ինչ չ'անէր, տղին որդէ պահէր, որ մարզը բան չը ֆահմէր, բերում ա պարանը կապում դրա միջքիցը, կախ անում ֆորր, մի քար էլ գնում բերնին, նոր էթում ա քուչի դուռը բաց անում: Բաց ա անում, տեսնում՝ իրա մարդը: Փաթթւում ա մարդի ճտովը, ուրախանում, աշխարով մին ըլնում: Գալիս են տուն, մարդ ու կնիկ նստում են, իրար քէֆ հարցնում, իրար հալ հարցնում, ասում, խօսում, ծիծաղում, խնդում, ջան ասում, ջան լսում:

—Այ կնիկ, հարցնում ա մարդը. բա էսքամ վախտ մնց իր եօլլայ էթում. ինչ իր ուտում, կիրակուր, զադ ընկնում էր ձեռդ, թէ չէ:

—Է՛հ, այ մարդ, ասում ա, ապրում ի, էլի, դէ առանց քեզ իմ օրը ինչ պտի ըլնէր: Օրը մի կտոր չոր հաց ի դնում աղաքս, ըն էլ կուլ չէր էթում:

—Այ կնիկ, ասում ա, ես սովոր եմ, հարցից-մասից ինչ կայ տանը, բէ ուտենք, պառկենք քնենք. ես էլ շարդուած, բեղարած եմ:

Կնիկը էթում ա դաստախունը բերում, գցում, մի էրկու հաց թիջում, մաշկում, էրկու. էլ ոոխ ա ճղում, բերում, դնում մարդի աղաքը: Խո որ տենում ա Աղդիլակը, սիրով մրմում, մխկտում ա. էն ոհաթը երեսը անում ա իշին, գտակը վեր ունում, պտտում. պտտելու բաշտան, էշը գոռում ա: Աղդիլակը իշին իրա գտակովն էր գարի տալի. ընենց որ սարվել էր, հենց որ տէրը գտակը ժամանում էր ժամանում էր՝ դարի ա բերում, ալբիալը զուռմ էր:

—Այ կնիկ, հարցնում ա մարդը, էս ինչ իշին ա:

—Է՛հ, կրեմ դրա գլուխը. ժամեժամքի վախտն էր, մի տղայ իշով էկաւ թէ՝ զարիք եմ, մի տեղ տու քնեմ, ըլ տուեցի. հալբաթ իմ եննուցը թաքուն մտել ա հայաթը, էշն էլ բերէ, ընդէ կապէ:

—Այ կնիկ, մեղքը չէր, խի չիր տեղ տալի. գնա կանչա գայ, զօնադն Աստունն ա:

Կնիկն էթում ա, տղին կանչում, բերում: Տղէն դալիս ա, բար' լիլիկուն ասում, ընդէ նստում. երեսն էլ իշի դիկն ա անում, որ եր ուղենայ՝ զւացնի: Նստում են հացի. Աղդիլակը էլի գտակը պտտում ա: Էշը ալբիալը զըռում ա:

—Չօռ, ասում ա Աղդիլակը, շատ բան ունեն պահած, դու պտի խարար տան:

—Ի՞նչ ա, խի ես բարկանում իշիդ վրէն, հարցընում ա տան տէրը:

—Բա ինչ անեմ. էշս ասում ա՝ զութու միջին հալուայ կայ, զազ կայ տապակած, խի չէք բերում, ուտում. խի էք սոխ ու հաց ուտում:

—Վայ, քուանամ ես, ասում ա կնիկը. ըսկի մտիս էր, ուրախութիւնիցս գլուխս կորցրել եմ:—

Էթում ա զութին բաց անում, ինչ կար չը կար բերում, դնում մարդի աղաքը: Խեղճ կնիկը ըստօնք ում հմար էր պահէ, ում զսմաթ էլաւ: Հացը որ ուտում են, պրծնում, կնիկն ասում ա.

—Քա, ջուր եմ դրէ թունդրի վրէն. բերեմ գլուխդ, ոններդ լուանաժ:

—Ճաշ լաւ կ'անես, այ կնիկ, ասում ա մարդը. զաթի ջարդուած, բեղարած եմ:

Կնիկն էթում ա տնքտնքալօն պղինձը բերում,

ուզում ա ածի թէշտը, Աղդիլակը գտակը պտտում ա. պտտելու բաշտան էշը ալբիալը գոռում ա:

— Զօռ, ասում ա Աղդիլակը. ինչ անում են՝ անեն, քու ինչ բանն ա:

— Ի՞նչ ա, խի ես բարկանում իշիդ վրէն, հարցը-նում ա տան տէրը:

— Իա ինչ անեն, ասում ա Աղդիլակը. էշս ասում ա՝ էդ ջուրը դեղած ա, տարէք ածէք ֆորը, թազադան ջուր դրէք տաքանայ:

— Ա՛ ջանըմ, այս գեօղըմ, ասում ա կնիկը, դեղածս որն ա, զադս որն ա. ես եմ իմ ձեռովը պղինձը թամուզ լուացէ, իմ ձեռովը ջուրն ածէ, տարէ դափարթմիշ արէ:

— Ա՛ կնիկ, ասում ա մարդը. խի ես հուջաթութիւն անում. բալի էդ էշը մի բան գիտայ, որ ասում ա. տարէք դէն ածէք, էլի, դրանում ինչ կայ, որ իսօսում ես:

Էդ կնիկը Աղդիլակի հեննայ պղինձը վեր ա ռւնում, տանում տաք, եռման ջուրը շըռուալէն լցնում ֆորը, — դուզ էն մարդի զլիսին, որ ընդէ տափ էր կացէ: Էդ խեղճ մարդը տեղն ու տեղը ալբիալը դիք ա չորանում:

— Ա՛ Աղդիլակ աղպէր, ասում ա կնիկը. որ էս օմինը հաղացիր իմ զլուխը, դէ էգուց թէզ վէ կը կացնեմ, օլուն դի էշիդ վրէն, տար գեղիցը դուս, մի դրազ տեղ ֆորա, որ սաղ աշխարքումը խաղկ ու խալտառակ չ'ըլ-նենք:

— Ա՛ չքիս վրէն, ասում ա Աղդիլակը. կը տանեմ:

Հաց են ուտում, պրծնում, թէք են ընկնում, քնում: Բիրադի քնում են, համայ կնիկ, քունդ ըսկի կը տանի: Որդիան կը տանէր, մահապարտ էր էլէ, մնացէ: Կէս դշերին կնիկը տենում ա, որ մարդը քնել ա, սուս ու փուս էթում ա Աղդիլակին բըռթում, վէ կացնում: Աղ-

դիլակը վեր ա կենում, էշը դուս քաշում, իալանը դնում վրէն, եննայ պարանը քաշում ա, խաշուած մարդին ֆորիցը հանում, դնում իշի վրէն, պարանով զայիմ կապում, — չո՞շ հա չօշ, չո՞շ հա չօշ, չո՞շ հա չօշ՝ քշում ա էթում:

Էթում ա, էթում, — շատն ու քիչն Աստօծ գիտայ, մի սհաթ, էրկու սհաթ, իրեք սհաթ, աքրորականչին հասնում ա մի գեղ: Էշը դուզ քշում ա դպա էդ գեղի կալերը: Էթում ա մի կալում վէ գալի, բհիրը վէ տալի. իշի նօխտէն զայիմ կապում բհրիցը, էթում մի խուրձ էլ ցորէն դողանում, բերում զցում իշի աղաքը, ինքն էլ կշախն թէք ընկնում, քնում: Էն բաշտէն էդ կալի տէրը վեր ա կենում, շորերը հագնում, էթում որ կալին ակը տալ. համայ մթնաժեռ ա ըլնում, աչքը զադ չի ջոկում, էթում ա կպնում իշին, իշի վրիցը էն մեռելը զըրըմփալէն վեր ա ընկնում Աղդիլակի վրէն: Աղդիլակը էն սհաթը վեր ա կենում տեղիցը, ինչ տենում — մի մարդ կողքին շիվարած, կաննած ա, մեռելն էլ էն դիհը վեր ընկած ա:

— Վայ քու տունը չը քանդուի, այ մարդ, գոռում ա Աղդիլակը. էս ինչ օյին հանեցիր իմ գլուխը: Ասում ա ու «վայ, ափի ջան» գոռալէն ընկնում ա էդ մեռլի վրէն:

— Էդ ո՞լ ա, ինչ էլաւ, շիվարած հարցնում ա կալի տէրը:

— Էլ ինչ պտի ըլնի, տունս քանդուեց, գնաց. խեղճ հէրս հիւանդ էր, ասեցի՝ տանեմ հէքմի զցեմ: Էկանք, էկանք, մութը գետինը կրխեց, ասեցինք՝ ըստէ վէ զանք, մի քիչ քնենք, դնջանանք, առաւոտը էլ ել վէ կենանք, էթանք մեր ճամփէն: Հմի ես ինչ անեմ, որ ջուրն ընկ-

Նեմ, իսեղճ հօրս վէ զցեցիր, բանվոգի արիր. էս ա ես էլ կ'էթամ տանուտէրին կը կանչեմ, թող գայ, մեր դատաստանն անի:

— Ամման, աղպէր, ասում ա էդ կալի տէրը. ես քու ոտի տակին մեռնեմ. էս եղներս, ըս էլ ցորէնո—քօմմա քեղ, թաքըլի տանուտէրի կուշտը մի էթայ. բէ ըստէ մի տեղ թաղենք, որ մարդ չ'իմանայ:

Քօնն ինչ կուզի.—էրկու աչք: Աղդիլակն էլ զաթի էս էր ուզում:

— Լաւ, ասում ա, թող քու ասածն ըլնի:

Բնրում են ըտէ մի տեղ քանդում, մեռելը թաղում: Եննայ էդ կալի տէրը բերում ա Աղդիլակին քսան եղն ա տալի, քսան խալվար ցորէն. ցորէնը լցնում ա ջուալները, բարձում եղները՝ ճամփու դնում:

Աղդիլակն ա՝ եղները աղաք ա անում, գալի: Գալիս ա, գալիս ա, գալիս ա, մի օր, էրկու օր, իբեք օր, մութը գետինը կոխում ա՝ հասնում ա իրանց գեղը: Էթում ա գուղ իրանց գուռը ծեծում: Մէրը գուս ա գալի, գուռը բաց անում, տենում իրա տղէն: Վազում ա ճտովը փաթթում, ջուխտ թուշը պաշում, աչքերը պաշում, ուրախանում, աշխարով մին ըլնում:

— Վայ, Աղդիլակ ջան, ասում ա. եռ քու էկած ճամփին մեռնեմ, արևէ դ մեռնեմ, աչքերիդ դուրսան, դադէդ առնեմ, բալայ ջան. էսքամ վախտ էս որդի իր:

— Այ մէր, ասում ա տղէն, հլա դրա վախտը չի. կաց եղները տուն անենք, բեռները վէ դնենք, եղները դնջանան, մեղք են:

Ասում ա ու քշում, եղները անում նեքսե: Հէրը էդ դալմաղալի վրէն տանիցը դուս ա թունում, տենում—զօրթ որ

հրէն իրա տղէն, եքայ քօչ ու բարխանով էկել ա, հայաթի միջին վեր էկէ:

— Այ հէր, ասում ա Աղդիլակը. ես քու մի եղն եմ մորթէ, առ հրէն նրա տեղակ քսանը. քա էրկու խալվար ցորէնն եմ կրակ տուէ, փչացրէ, առ նրա տեղակ քսան խալվար:

— Ի՛հ, Աղդիլակ ջան, ասում ա հէրը, գու սաղ ըլնես. քեզ որ սաղ-սալամաթ տեհանք, հէնց իմացանք սաղ աշխարքը մեղ տուին:

Նոր էթում են տուն, նտում, ասում, խօսում, մասլահաթ անում, իրար հալ հարցնում, ջան ասում, ջան լսում, ուտում, խմում, քէֆ անում լնչանք դառը կէս գշեր. նոր թէք են ընկնում, քնում, լաւ լաւ էրազներ տենում:

Նրանք հասան իրանց մուրազին, դուք էլ հասնէք ձեր մուրազին:

## ՔԱՌԱՍՈՒՆ ՀԱՐԱՄԻ

(Արարատեան բարբառով)

Աւալ ժամանակին ըլնում ա չիլնում մի մարդ, մի կնիկ: Սրանք շատ քեասիք, դառն աղքատ են ըլնում: Սրանք ունենում են մի մինուճար տղայ: Էդ տըղին ինչ փէշակի տալիս ին, ինչ գործի դնում ին, ոնչ մի տեղ էլա չեր բնակալում, մի քանի օր մնում էր, էլ եդ թողում, գալի երանց տունը: Վերջը էդ տղէն դալիս ա, հօրնը-մօրը ասում:

— Հմի էլ բերէք ինձ տուէք դերձկի աշկերտ. բալքի էդ փէշակը սիրտս վեր ա ունում, հաւանում եմ, մնում եմ, մարդ դառնում:

— Լաւ, ասում են հէրնը-մէրը. արի ըտ էլ փորձենք, տենանք ինչ կը դուս գայ:

Վեր են ունում դրան տալի դերձկի աշկերտ: Էդ դերձիկն էլ թագաւորի դերձիկն ա ըլնում:

Անց ա կենում մի օր, էրկու օր, իրեք օր, օրէն մի օրը թագաւորը իրա դերձկին կանչում ա, մի խաս կտոր տալի, ասում:

— Տար ինձ հմար մի կապա կարա. համայ որ խարաք ես արէ, իմաց կաց գլուխդ կը ֆըրըրայ:

— Ա'չիս վրէն, ասում ա դերձիկը: — Թագաւորին գլուխ ա տալի, կտորը վեր ունում, թողում գալի: Գալիս ա դուքան, կտորը դնում դազգեահի վրէն ու ինքը էթում տուն հաց ուտելու: Հէնց ուստէն ոտը դուքանիցը դուս ա դնում թէ չէ, էդ աշկերտն ա, վեր ա ունում մկրատը, ընկնում էդ կտորի ջանին, մանդր մանդր կոտորում, վեր ածում, եանի թէ ձևում ա: Անց ա կենում մի սհաթ, ուստէն գալիս ա. որ չի տենում աշկերտի արարմունքը, մաղերը գլխին բիզ բիզ ա կաննում:

— Ա' քու եդ գցողի ըսենց, ընենցը...

Ասում ա ու փէտը վեր ունում, վրա պրծնում, որ նրան մի լաւ սալջարդ անի թողայ: Ընչանք նրա փէտ վեր ունիլը, աշկերտը ծկլում ա, եալլայ դպա դուզ տուն: Որ գալիս ա տուն, հէրնը-մէրը բարկանում են տղի վրէն:

— Ա' որդի, ասում են, բա ինչ անենք. որդէ տալիս ենք, բանդ չես ըլնում, թողում ես, փախնում: Զոր մընք էլ մեղք ենք. խի ես մեր սիրտը մաշում, թողում:

— Բաս որ ըտենց ա, այ հէր, ասում ա տղէն. էգուց մի բօլ չամիչ առ, լցրա արխալղիս ջուխտ ջէքը, իրար հեննայ էթանք. որդէ չամիչը հատնի, ընդէ ինձ աշկերտ տու:

— Լաւ, ասում ա հէրը. ըտ էլ փորձենք, տենանք:

Յէքսի օրը, առաւոտը գշերով-գշերհանայ հէրը ճամփի պաշար ա վեր ունում, տղին աղաք անում, տանում բազար, մի քանի գրուանքայ չամիչ ա առնում, լցնում տղի ջուխտ ջէքը, ընկնում ճամփայ: իթում են, էթում են, մի սհաթ, էրկու սհաթ, իրեք սհաթ, մախլասի մի օր, իրիկունը հասնում են մի չօլ, եաբանի տեղ: Ըտէ չամիչը հատնում ա:

— Ա՛ հէր, ասում ա, ես ըստէ աշկերտ կ'ըլնեմ:

— Ա՛ որդի, ասում ա, ըստէ ում կշտին ես աշկերտ ըլնում. ըստէ ոնչ մարդ կայ, ոնչ մադաթ:

Հէնց էդ խօսքի վրէն տենում են էն դհիցը մի մարդ ա զալի:

— Ա՛ հէր, ասում ա, հրէն էն դհիցը մի մարդ ա զալի. ինձ տու նրան աշկերտ:

Էդ մարդն ա, գալիս ա, հասնում դրանց կուշտը:

— Բարով, ասում ա էդ մարդը:

— Բարով, Ասսու հազար բարին, խէրին, ասում ա հէրը:

— Ի՞նչ մարդ էք, ի՞նչ էք շինում ըստերանք, հարցնում ա էդ մարդը: Ո՞չն իրա պօռտովը, դուշն իրա թեռովը ընչանք օրս ըստէ անք ոտ չի դրէ, դուք ոնց էք սիրտ արէ, էկէ:

— Քու սէրն ա բերէ, ասում ա հէրը. բերել եմ տըղիս քու կուշտը աշկերտ տամ: Ի՞նչ փէշակի ես, աղպէր, հարցնում ա:

— Մենք որ կանք, ասում ա, քառասուն հարամի ենք. գշերները զալիս ենք զեղարենքը, թալանում, տուն կտրում, մախլասի ինչ ձեռներս ընկնում ա, թոցընում ենք, գալի ըստէ: Հմի դու զիտաս, ասում ա, որ տղիդ տաս մեր կուշտը աշկերտ, ըստօնք պտի սարվացընենք. կը տաս՝ դու զիտաս, չես տայ՝ էլի դու զիտաս:

— Ա՛ հէր, ասում ա բեղովվաթ տղէն. էս հէնց իմ բանն ա, սրանից էլ լաւ փէշակ չիլնի. աշխարքի հարստութիւն, խազինայ, մալ ու զօլվաթ թօփ կ'անեմ:

— Թու զիտաս, այ որդի, ասում ա. մեղքն ու վարձքը քու շինքը:

Ասում ա, տղի ջուխտ թուշը պաշում, տղի կուռը

բռնում, տալի էդ մարդին, նրա հեննայ մնաս բարով անում, վէ կհնում, եդ դառնում դպա տռւն:

Էդ հարամին ա, տղին աղաք ա անում, տանում: Գալիս են գալի, շատն ու քիչն Աստօծ դիտայ, հասնում են մի մենծ քարի կուշտ:

— Իս քարը տենում ես, ասում ա հարամին, մեր տունը սրա տակին ա. որ կ'էթանք կը մննենք նեքսէ, մեր հարամբաշին քօմմքի վիրել նստած ա, կ'էթաս նըրան գլուխ կը տաս, եննայ կը գաս, քօմմքի ներքսէ, դռան տակին կը նստես:

— Լաւ, ասում ա տղէն վախլութիւնիցը դողալօն, բտենց կ'անեմ:

Հարամին էդ քարը բանձրացնում ա. էդ քարի տակին մի ծակ ա բաց ըլնում, էդ ծակովը վեր են զալի ներքսէ, էլ եդ քարը դնում ծակի բերնին. իթում են էթում, հասնում են զրանց ամարաթը: Մննում են ամարաթը, տղէն տենում ա հրէն քառասուն հարամին, եաբաղ, ասպարի միջի կորած, նստուած են: իթում ա հարամբաշուն գլուխ ա տալի, դռան տակին նստում: Անց ա կինում մի սհաթ, էրկու սհաթ, իրեք սհաթ, հարամբաշին ձէն ա տալի.

— Ո՞րդի ա մի զօչաղ տղայ, էթայ համամումը հալուայ անի, բերի, ուտեմ, հա:

Էդ տղէն մնում ա արմացած, որ տենում ա ընկօրտանցից ոչ մինն էլ ա ձէն-ծպտուն չի հանում: Վեր ա կենում տեղիցը, կաննում:

— Աղայ, ասում ա. ես կ'էթամ, կ'անեմ, կը բերեմ

— Սուս, ասում ա հարամբաշին, էսքամ իալիր ձէն չը հանեցին, դու բիրադնիցը զօչաղ էլար:

Տղէն էլ եդ նստում ա իրա տեղը, տաղ անում: Անց

ա կենում մի սհալժ, հարամբաշին թաղաղան հարցնում ա.

—Ո՞րդի ա մի զօչաղ տղայ, էթայ համամումը հալուալ անի, բերի, ուտեմ, հա:

Ընկերտինքը էլի ձէն չը հանեցին: Տղէն էս որ տեհաւ, էլի տեղիցը վէ կացաւ:

—Աղայ, ասեց, ես կ'էթամ, կ'էփեմ, կը բերեմ:

—Զէնդ կտրա, ասեց հարամբաշին. շատ պտի զահուէս տանես:

Էլի խեղճ տղէն սուս կացաւ, տեղը նստեց: Անց կացաւ մի վախտ, էլի հարամբաշին ձէն տուեց:

—Այ մի զօչաղ տղայ, էթայ համամումը հալուալ անի, բերի, ուտեմ, հա:

Ընկերտինքը էլի տաղ են անում: Տղէն էս որ տեսնում ա, էլի չի համբերում, վեր ա կենում, կաննում:

—Աղայ, ասում ա, դրանում ինչ կայ. թող ես էթահ, անեմ, բերեմ, էլի:

—Լաւ, ասում ա հարամբաշին ընկօրտանցը. տարէք սրան համամը շանց տուէք, թող էփի, տենանք, որ ըսնց դուդուղնում ա:

Հարամիքը վեր են ունում ինչ որ պէտքն ա՝ եղ, ալիր, շաքար, ցախ, տանում են համամը հեռուց շանց տալի, իրանք թողում դալի: Էդ տղէն ա, զադ-մադերը վեր ա ունում, մննում համամը. տենում ա՝ մարդ, մադաթ չը կայ: Ին սհաթը բերում ա օջաղը սարքում ա, կրակ անում, թաւէն գնում վրէն: Հալուէն էփում ա պրծնում, թաւի պօչը բռնում ա, հէնց ուզում ա զուս դայ, էն սհաթը յերդկիցը մի կնիկ, փէտէ գդալը ձեռին, ձէն ա տալի:

—Այ տղայ, այ տղայ, ասում ա, ինչ կը լի հալուալ տաս՝ ուտեմ:

—Բէ՛, նանի ջան, ասում ա տղէն, բէ՛ տամ:

Տղէն գդալը ձեռիցն առնում ա, տալի հալուի մէջը, վեր ունում, տալի էն կնկանը. Էդ կնիկը հալուէն ալուետի ուտում ա, պրծնում, էլի ա ուզում: Տղէն էլի ա տալի: Ըսենց մին, էրկու, իրեք, էն կնիկը քանի ուզում ա՝ տղէն տալիս ա: Վերջը որ շատ զահլէն տանում ա, թաւէն վեր ա ունում, հէնց ուզում ա զուս դայ, կնիկը ձէն ա տալի.

—Այ տղայ, այ տղայ, քեզ վարձք ա, ինչ կը լի կաննես, ատս դնեմ ուսիդ, վէ դամ, լեղանամ:

Տղէն էն սհաթը թաւէն վեր ա դնում, կաննում, կնիկը ոտք գնում ա տղի ոսխն, վէ դալի ներքև: Հէնց վեր ա զալի թէ չէ, վրա ա հասնում տղին, որ վեր ունի, գեննովը տայ. տղէն էլ կնկայ եախալ-մախէն ա հաւաքում, ըստէ էրկոսվ կոխ են պրծնում: Կոխ են պրծնում, կոխ են պրծնում, տղէն կնկանը տալիս ա գեննովը: Կնիկը ամօթու վեր ա կենում, փախնում, մաշկի թայն էլ թողում ա ըսնդէ: Տղէն մաշիկը վեր ա ունում, ընչ տենում.—չուտես, չը խմես, էդ մարքարտաշար մաշկին թամաշ անես, էնքան մի սիրունիկ զադ էր: Էդ մաշկի վեր ա ունում, բերում, տանում հալուի հեննալ զընում հարամբաշու աղաքը: Հարամբաշին էս որ չի տենում, մնում ա բերանը բաց. վեր ա կենում, տղի ճակատը պաշում:

—Սֆփարիմ, ասում ա, էսքամ տարի սրտիս ուզածն էս էր, ընկօրտանցիցս ոչ մինն էլ ա սիրտ չէր անում, էթայ, բերի. քօմմքից զօչաղը դու էլար, որ սիրտ արիր, զնացիր, սրտառղելիքս բերիր:

Ասում ա ու տղին իրա կշտին նստացնում: Անց ա

կենում միքանի վախտ, մի օր, էրկու օր, իրեք օր, մախուսի մի շաբաթ, օրէն մի օրը հարամբաշին ասում ա.

— Մէկն ու մէկդ էս մաշկի թալը վէ կալէք, տարբազար, ծախէք, հալբաթ մի քանի շալի կը տան, հացածաց առէք, ինչ որ պէտքն ա՝ առէք, բերէք:

Ավ կը տանի, ով չի տանի, — հարամքանցից ոչ մինն էլ ա սիրտ չի ասում տանի: Վերջը էլի զալիս են, կպնում մեր զօջաղ տղի եախէն:

— Թէ տանես, ասում են, էլի դու կը տանես, կը ծախես, մարդ չէ:

— Ջատ լաւ, ասում ա տղէն, որ ասում էք կը տանեմ:

Վեր ա ունում մաշկի թալը, էթում զպա բազար: Էթում ա, ում տենում ա, շանց ա տալի, չեն առնում, թէ մի թալ մաշիկն առնենք, ինչ անենք: Վերջը որ շատ ման ա զալի, տենում ա, ընը, հրէս թագաւորի նաղիրը մօտացաւ զբան:

— Այ տղայ, հարցրեց նազիրը, էղ մաշկի թալը քեզ որդիան ա, որ ծախում ես:

— Քեզ ինչ, ասեց տղէն, ծախում եմ, ուզում ես առ, չես ուզում մի առնի:

— Իս թագաւորի կնկայ մաշիկն ա, ասեց նազիրը. մը էթանք թագաւորի կուշտը:

Ասում ա ու դրան քաշ տալի զպա թագաւորի ամարաթը: Տանում ա դուզ թագաւորի կուշտը:

— Այ տղայ, ասում ա թագաւորը, էս իմ կնկայ մաշիկն ա, որդիան ա ընկէ քու ձեռը. դրուստն ասա, թէ դուխտ թոցնիլ կը տամ:

— Թագաւորն ապրած կենալ, ասում ա տղէն, էս մաշկի թալը ես ֆլան վախտը, ֆլան համամումն եմ դու:

Կստում ա ըստէ երկէն ու բարակ, մին մին, տեղը տեղին նազ ա անում իրա զլխով անց կացածը, ոնց որ ես ձեզ նազ արի:

— Տղայ, ասում ա թագաւորը, բաս որ ըտենց ա, քեզ բաց չեմ թողայ, բնչանք սրա թալն էլ չը բերես:

— Թագաւորն ապրած կենալ, ասում ա տղէն, որ ինձ բունես, ոնց բերեմ. Փլան տեղը քառասուն ընկեր ունեմ, մարդ տու, էթամ նրանց բերեմ, թողամ կշտիտ զբաւ, ես էթամ մաշկի թալը բերեմ. քառ ասուն օր էլ ինձ մհուլ տու. չը բերեցի՞ մեր արինք քեզ հալալ ա ինչ ուզում ես արա:

— Լաւ, ասում ա թագաւորը, թող ըտենց ընի:

Տղի հեննայ զօշուն ա գնում, էթում են էն քառասուն հարամուն բերում իրա կուշտը: Թագաւորը հրամայում ա սրանց գցեն մի օթախ, դուռը վրները զալիմ շինեն, ընչանք տղի դուրը:

Էդ տղէն ա, ճամփի թագարէք ա տենում, վէ կենում, ընկնում ճամփայ: Էթում ա, էթում ա, էթում ա, մի օր, էրկու օր, մախլասի իրեք օր, հասնում ա մի զեղի կուշտ: Տենում ա բու մի պառաւ կնիկ ճիպօտը ձեռին կաննել ա մի զերեզմանի վրա, ճիպօտով տալիս ա ֆողին, ասում. — Ֆող, եդ դնա. — Ֆողը եդ ա էթում. տալիս ա մեռլին, ասում. — Պեռել, սաղացի. — մեռելը սաղանում ա: Էդ տղէն էս որ տենում ա, մնում ա արացած:

— Արի, ասում ա ինքն իրան, մի ճիպօտը ձեռիցն առնեմ, տենամ հունարը ճիպօտումն ա, թէ պառաւումը:

Ասում ա ու վրա հասնում պառաւին: Այ նրան, նա սրան, սա նրան, նա սրան, վերջը տղէն զուռում ա, պառաւի ձեռիցը ճիպօտն առնում ա պուկ: Էթում ա,

էթում ա, շատն ու քիչն Աստօծ զիտալ, հասնում ա մի քաղաք: Տենում ա սաղ քաղաքը տխուր, տրտում, որ ասես սաս ու սամուր չը կայ: Մի մարդ ընդիան տենում ա էդ դարիպ տղին, մօտանում ա գրան:

— Պարիպ աղպէր, ասում ա էդ մարդը. օձն իրա պուտովը, զուշն իրա թեռովը ընչանք օրս սիրտ չի արէ ըստերանք ոտ դնի, դու մնց հս սիրտ արէ, էկէ. որ թագաւորը իմացել ա, մենծ թիքէն անկաջդ կը թողար:

— Խի՞, ինչ ա պատահէ, հարցնում ա տղէն:

— Է՛ ինչ պաի պատահի, ասում ա էն մարդը. մեր խեղճ թագաւորն էր մի մինումար տղալ, էս ա մի տարի ա՝ մեռել ա. հիւանդ վախտը աշխարքումը ինչքամ զլուխ հէքիմ կար՝ բերին, ինչ դեղ, դարման ասեա՝ արին, ճար, իլլաճ չ'էլաւ, չը լաւացաւ. հմի էլ մի պօլօվիկ տարի սաղ քաղաքը սուդ ա պահում թագաւորի տղի հմար. անումը դարիպ մեր քաղաքը չի կարում ոտ դնի, թագաւորը քօմմքի զլուխն էլ, բարի հերսիցը, կտրիլ ա տալի:

— Ո՞րդի ա ձեր թագաւորի տղի գերեզմանը, ասում ա, ես կը սաղացնեմ:

— Ա՛ տղալ, մի անի, մի ըլնի, ջահէլ, ջիվան ես, աչքդ մուրազի ա, դնա արևկուդ ձէնն ածա. խի՞ ես զուր տեղը անդալ զլուխդ դալմաղալի մէջ զցում:

— Զէ, որ չէ, ասում ա տղէն. քու ինչ բանն ա, դու ինձ տար թագաւորի կուշտը:

— Լաւ, ասում ա. որ ուզում ես՝ էթանք:

Եդ մարդն ա, տղի կուռը բռնում ա, տանում զուդ թագաւորի ամարաթը: Նրան դռանը կաննացնում ա, ինքը մննում նեքսե, թագաւորին զլուխ տալի, ընդէ կաննում:

— Հ'ը, խի՞ ես էկէ, ինչ՝ խնդիրք ունես, հարցնում ա թագաւորը հերսոտած:

— Թագաւորն ապրած կենալ, ասում ա, մի դարիպ տղալ ա էկէ մեր երկիրը, ասում ա՝ ես թագաւորի տղին մեռած տեղիցը կը վէկացնեմ:

— Ո՞րդի ա էդ տղէն, հարցնում ա թագաւորը:

— Հրէն դռանը կաննած ա. թագաւորն ապրած կենալ, թէ կը հրամայնս, էթամ կանչեմ, զայ:

— Թողդ զայ, ասում ա. տենանք ինչ մարդ ա:

իս մարդն ա, էթում ա տղին կանչում, բերում թագաւորի կուշտը: Տղէն զալիս ա, թագաւորին զլուխ տալի, ընդէ կաննում:

— Ի՞նչ մարդ ես, հարցնում ա թագաւորը. ո՞րդիան ես զալի:

— Թագաւորն ապրած կենալ, ասում ա տղէն. ես ֆլան մարդն եմ, ֆլան երկրիցն եմ զալի:

— Բա մնց ես սիրտ արէ, էկէ իմ քաղաքը. չես դիտալ, որ սրտիս հերսիցը քօմմքի զլուխն էլ կտրիլ եմ տալի:

— Թագաւորն ապրած կենալ, ասում ա. էկէլ եմ տղիդ սաղացնեմ:

— Բերան չի, եկեղեցի ա, ասում ա թագաւորը, էրնակ չի սաղացնես. սաղացըիր՝ քաշովի մին ոսկի կը տամ. չը սաղացըիր՝ իմաց կաց զլուխդ կը ֆըռուալ: Ղաբուլ ես:

— Պարուլ եմ, թագաւորն ապրած կենալ:

— Պարուլ ես:

— Պարուլ եմ:

— Պարուլ ես:

— Կարուկ եմ, թագաւորն ապրած կենայ. ըլ կարացի, արինս քեզ հալալ ա:

— Բաս որ ըտենց ա, ասում ա, սրան տարէք տղիս գերեզմանը շանց տուէք:

Նազիր, վէզիրը սրան աղաք են անում, տանում թագաւորի տղի գերեզմանի վրէն կաննացնում, որ ամառաթի կշտին էր: Թագաւորն էլ էթում ա իրա փանջարի աղաքին կաննում, ասում ա՝ տենամ ոնց ա տղիս մեռած տեղիցը վէ կացնում: Էդ տղէն ա, պառաւի ճիպօտը փէշի տակիցը հանում ա, տալիս ա գերեզմանի քարին. — Փար, դէն գնա, — ասում ա: Ալբիալը քարը դէն տէթում: Եննայ ճիպօտովը ֆողին ա տալի. — Փող, դէն թափի, — ասում ա: Ին սհաթը ֆողը դէս, դէն ա ցվըրում, մեռելը էրևում ա: Ճիպօտովը մեռլին ա տալի. — Մեռել, սաղացի, — ասում ա: Վըն էլ տեհան ինչ — թագաւորի տղէն փռշտաց, մեռած տեղիցը վէ կացաւ, դիք կաննեց: Թագաւորը էս որ տեհաւ, ուրախութիւնիցը իրան փանջարիցը գցեց ներքեւ. վազեց փաթթուեց տղի շլնքովը:

— Տղայ, ձէն տուեց թագաւորը, լիզուդ ինչ պտըստում ա, ասա՝ տամ. սաղ թագաւորութիւնս էլ ուղես, իմաց կաց կը տամ, չեմ ինայի:

— Զէ, թագաւորն ապրած կենայ, ասեց տղէն, զադ չեմ ուղում, մէնակ քու գեամչուն ասա, որ ինձ ծովն անցկացնի էն երեսը:

— Էդ ինչ ա որ ուղում ես, ասեց թագաւորը զարմացած, քաշովի մին սովա, մալ ուղա, գօլվաթ ուղա՝ տամ:

— Զէ, թագաւորն ապրած կենայ, ասեց. քու մալ ու գօլվաթը քեզ հալալ ըլնի, ինձ մէնակ անցկացրած ծովի էն զրադը. սրանից սավայի ուրիշ բան չեմ ուղում:

Թագաւորը տղին որ շատ գուռում ա, տենում ա ոնչ ոսկի ա ուղում, ոնչ մալ, ոնչ գօլվաթ, մախլասի ըսկի զատ չի վեր ունում, կանչում ա իրա գեամչուն:

— Էս տղին, ասում ա կը գնես գեամին, կը տանես սաղ-սալամաթ կ'անցկացնես ծովի էն զրադը, էլ եդ կը թողաս, կը գաս:

— Թագաւորն ապրած կենայ, ասում ա գեամչին, էս մի ամիս ա՝ գեամին չի բանում. Հէնց էթում ա հասնում ծովի մէջ տեղը, բիրդան ջուրը տակն ու վրա ա ըլնում, լափին տակի, գեամին քիչ ա մնում շուռ գայ. չենք գիտայ էս ինչ բաս ա:

— Ի՞նչ ուղում ա ըլնի, ասում ա տղէն, որ իմանամ պտի ձկների փայ ըլնեմ, էլի պտի անցկենամ:

— Գու գիտաս, ասում ա գեամչին. մեղքն ու վարձը քու շլնքը, որ ասում ես՝ կը տանեմ:

Էթում ա գեամին սարքում, տղին նստացնում, ընկնում ճամփայ: Էթում են, էթում, շատն ու քիչն Աստօծ գիտայ, հասնում են հէնց ծովի մէջ տեղը՝ ջուրը էլի տակն ու վրա ա ըլնում, քիչ ա մնում գեամին շուռ տայ: Դիղիջը տղէն ալբիալը շորերը հանում ա, իրան զցում ծովը, սկըսեմ ջրի տակի: Ջրի տակին էթում ա, էթում, հասնում ա ծովի անտակը, ինչ տենում — մի պառաւ կնիկ նստել ա, մատին էլ մի մատանիք կայ, որ մատանիք ակը անում ա դպա ջուրը, էն սհաթը ծովը տակն ու վրա ա ըլնում, ալէկործումն ընկնում: Ջանըսսան տղէն էս որ տենում ա, վրա ա հասնում պառաւին, հեղտխտորում, մատանիքը ձեռիցն առնում, էլ եդ գուս զալի ջրի երեսը: Ալբիալը ծովը հանդարտում ա: Գեամչին մնացել էր շիվարած, թէ էս տղի միջին ինչ հունար կայ, որ սկուեց ջրի տակը, ծովը ալբիալը հանդար-

տեց: Էթում են, էթում, շատն ու քիչն Աստօծ զիտայ, մի օր, էրկու օր, իրեք օր, մախլասի մի շաբաթ, դուս են գալի ծովի էն երեսը: Որ հասնում են ծովի ղրաղը, տը-ղէն գեամչու հեննայ մնաս բարով ա անում, մի ճամփայ բռնում ա, էթում:

Էթում ա, էթում ա, էթում ա, հասնում ա մի գիւլի բաղ: Բաղիցը վեր ա գալի էն դիհը, տենում ա միջին մի ամարաթ, մի ամարաթ, մի ամարաթ, որ չուտես, չը խմես, չը հագնես, չը մաշես, հէնց էդ ամարաթին թամաշ անես,— էնքամ մի լաւ շինած էր: Դուռը բաց ա անում, մննում նեքսե, ինչ տենում.— մի սուփրա ա բաց արած, մի սուփրա ա բաց արած, որ Աստու ամեն բարիքը միջին կար: Էդ տղէն էլ զաթի սուփած, նխտից ընկած, վրա ա պրճնում, որ ուտի: Հացին ձեռ ա տալի, ուզում ա կտրի, դնի բերանը, հացը դառնում ա մի բուռը ցորէն, շաղ անցնում գեննին. տապակած հա-փ վլէն ա ձեռը դնում, հաւն ա սաղանում. խաշած ձկանն ա ձեռ տալի, ձուկն ա սաղանում, խրլալտալէն ձեռիցը վեր ընկնում. մախլաս, վլխներդ ինչ ցաւա-ցնեմ, ընչի ձեռ ա տալի, տեղիցը ժաժ ա գալի, դէս, դէն թափում, ես սաղանում, ձեռիցը դուս պրճնում, վեր ընկնում:

— Բալի, ասում ա ինքն իրան, կայ չը կայ, ըստէ մի բան կայ:

Տենում ա դուան կշտին հրէնիկ մի բուխարի, վրէն էլ սիպտակ փարդէն կախ արած: Ասում ա.— մննեմ էս բուխարին, տափ կենամ, տենամ սրա վերջն ինչ ա ըլ-նում:— Կենում ա մի սհաթ, էրկու սհաթ, իրեք սհաթ, մըն էլ տենում ա հրէնիկ իրեք նաշխուն, սիրուն աղու-նիկ թռան, էկան, վեր էկան, իրանց խրխիքը հանեցին, դա-

ռան իրեք ջահէկ, ջիվան, ջէլրան, հուրի-մալաք աղջկէք, ընդէ կաննեցին: Եննայ մօտացան սուփրին, որ հաց ու-տեն, տեհան ամանիքը ըստէ, ընդէ գեննին թափուտած, շաղ անցած, կիրակրները խառնըշտորած, վեր ածած, մախլասի ոնչ մի բան իրա տեղը չի:— Կայ չը կայ, ասե-ցին, ըստէ խանարդի ա մտէ, մեր սուփրին խանարդու ձեռ ա դիպէ: Տենաս ով ա էլէ, ով չի էլէ, որ սիրու ա արէ, մտէ մեր ամարաթմբ: Ճատ միտք արին, խելք խել-քի տուին, ման էկան՝ չը գտան:

— Ա՛խ, ասեց մենծ քիրը, քաշկայ էն տղէն ըլնէր, որ համտոմի միջին հալուալ էկեց, հեննէս կոխ պրծաւ, ինձ աղտեց, մաշկիս թալը վէ կալաւ, գնաց: Ըստէ ըլ-նէր, ես պաչէի՝ քեզ տալի, դու պաչէիր՝ նրան տալիր, նա էլ պաչէր՝ ինձ տար:

— Ա՛խ, ասեց միջնէկ քիրը. էլնէկ էն տղէն ըլնէր, որ ես ճիպտուվ մեռելներ ի սաղցնում, էկաւ զլիխ բամբաչեց, ճիպտը ձեռիցս առաւ, դնաց: Ըստէ ըլնէր, ես պաչէի՝ քեզ տալի, դու պաչէիր՝ նրան տալիր, նա էլ պաչէր՝ ինձ տար:

— Ա՛խ, ասեց պուճուր քիրը, քաշկայ էն տղէն ըլ-նէր, որ սկուեց ծովի անտակը, մատանիքը ձեռիցս խը-լեց, փախաւ: Ըստէ ըլնէր, ես պաչէի՝ քեզ տալի, դու պաչէիր՝ նրան տալիր, նա էլ պաչէր՝ ինձ տար:

Էդ տղէն բուխարու միջին ըստօնք որ քօմմայ լը-սում ա, ալբիալը մատը կծում ա:

— Բալի, ասում ա ինքն իրան, կայ չը կայ էս էն աղջկէքն են, որ սար ու ձոր ընկած, քար ու քոլ ըն-կած սրանց հաւարին ման եմ դալի:

Ասում ա ու փարդէն եղ ա տանում, բուխարու մի-ջիցը դուս դալի, արշայ ընկնում, ընդէ կաննում: ին-

իրեք քիրն էլ գրան որ տեսում են, ուրախանում, աշշարով մին են ընում. վրա են պրծնում ամեն մինը մի դհիղը տղին պաշում, պաշզորում, պաշելոց չեն կշտանում: Նոր նստում են թաղադան հացի. ուտում են, խըմում, քէֆ անում, ասում, խօսում, ջան ասում, ջան լսում:

— ՀՇ', ասում են աղջկէքը, օձն իրա պուտովը, դուշն իրա թևովը, ընչանք օրս սիրտ չի արէ ըստերանք ոտ դնի, դու ոնց սիրտ արիր էկար:

— Զեր սէրն ա բերէ, ասում ա տղէն:

— Սէրում կենաս, ասում են աղջկէքը: Արի դրուտն անսա, դու մի փորացաւ կունենաս, որ ըսենց չօլէ չօլ ես ընկէ:

— ՀՇ, ասում ա տղէն, ձեզանից պահեմ, Ասսանից ինչ պահեմ. հալ նազլ ըսենց, ըսենց, ըսենց բան: Նըստում ա մին մին իրա գլխով անցկացածը նազլ անում, ոնց որ ես ձեզ նազլ արի: Քդուց էլ, ասում ա, վադէն թամծում ա. մաշկի թայը հասցրի՝ հասցրի, ըլ հասցրի, ընկօրտանց գլխները պտի ֆը՛ռռայ:

— Արխէցին կաց, ասում են քվերտինքը. հլա վագայ շատ ունես, մենք իրա վախտին քեզ ընենց կը տանենք, կը հասցնենք էն թագաւորի երկիրը, որ դու էլ չես իմանայ:

— Դուք գիտաք, ասում ա տղէն, ինչ ուզում էք արէք. ձեր արած լաւութիւնը հուր յափտենական մըտից չեմ զցի. չունքի դուք չըլնէիք, ես էլ ի կորած, իմ քառասուն ընկերտինքն էլ, որ թագաւորի կշտին թողել եմ գրաւ, վէ կացէ, էկէ:

— Դարտ մի անի, ասում են, էն մաշկիցը ինչքամ ուզում ես էս դշեր կը գործենք, հազիր կ'անենք,

կզոց վէ կունես, կը տանես: չմի դու էն ասա, որ էթաս, եթ կը գաս: Արանից դէնը դու դիտաս, որ մենք քունն ենք, դու մերը:

— Իրեք օր ինձ մհանկ տուէք, ասում ա տղէն. Էկայ հօ էկայ, չէկայ իմաց կացէք գլուխս փորձանք ա էկէ:

— Լաւ, ասում են աղջկէքը, իրեք օր քեզ մհանկ:

Եթ դշեր իրեք քիրը նստում են, հայդէ հայ էն մաշկիցը գործում են. մի էրկու, իրեք հարիր ջուխս գործում են, հազիր անում: Առաւոտը դշերով, դշերհանալ վեր են կենում, ճամփի թաղարէք տեսում, ոսկէ մաշկները լցնում են մի խուրջնի մէջ, բերանը դայիմ կապում, եննայ էդ աղջկէքը իրանց խրխիքը հագնում են, դառնում իրեք սիրուն, նաշխուն աղունիկ, էդ տղին սրով նստացնում իրանց թևերի վրէն ու թռնում: Էդ իրեք աղունիկը թռնում են, թռնում են, թռնում են, ընչանք իրիկուն հասնում են էն թագաւորի երկիրը. գալիս են գուզ թագաւորի ամարաթի կշտին վէ գալիս Ֆէն խուրջինը վեր ա ունում, գցում շալակը, էթում մննում գուզ թագաւորի ամարաթը: Հէնց ընդէ ա հասնում, որ ջանլաթները հազրուել են, պտի նրա ընկօրտունց գլխները թռցնեն: Տղէն խուրջինը ուսին գալիս ա թագաւորին գլուխ տալի, խուրջինը դնում թագաւորի աղաքը, ինքը ընդէ կանում: Թագաւորը մնում ա զարմացած տղին մտիկ անելօն, թէ ալուստի էս որդիխան դուս էկաւ, ընդէ կաննեց:

— Թագաւորն ապրած կենայ, ասում ա տղէն. մի մաշկի տեղակ հրէս խուրջինը լիքը մաշիկ եմ բերէ:

Ասում ա, խուրջնի բերանը բաց անում, մին մին մաշկները հանում, թագաւորին շանց տալի, նրա աղաքին կիտում: Թագաւորը մնում ա բերանը բաց տղի երե-

սին մտիլ անելօն: Ալբիալը հրամայում ա՞ նրա ընկօրտանցը բաց թողան, նրանց լաւ լաւ փէշքաշներ տան, ճամփու դնեն:

Քառասուն հարամին հօ ուրախութիւններիցը չին իմանում ինչ անեն, ոնց էդ տղի լաւութիւնի տակիցը դուս զան:

Տղէն ըստէ ընկօրտանց հեննալ մնաս բարով ա անում, ասում ա՞ ես մուրադ ունեմ, պտի էթամ: Գուս ա գալի չոլո, էն աղունկներին ման զալի, զտնում:

— Հմի ուր ես էթում, հարցնում են աղունկները.

— Հօրնը-մօրս կուշտը, ասում ա տղէն, ընդիան էլ նրանց վեր ունենք, էթանք ձեր երկիրը:

— Լաւ, ասում են աղունկները, էթանք:

Սրան գնում են սրով էլ եդ իրանց թեների վրէն, թունում: Թունում են, թունում, հասնում են տղի երկիրը. տանում են նրանց տան կշտին վէ բերում: Տղէն էթում ա իրանց տունը: Հէրնը-մէրը որ իրանց տղին տենում են, ուրախանում, աշխարով մին են ըլնում:

— Ա! որդի, ասում են, էս ուր իր էսքամ վախա, էլ իդ ու թօգդ չէրևաց. մի խարար էլ ա չես զրկում, որ իմանանք սաղ-սալամաթ ես, մընք էլ միամտուենք:

Նոր տղէն ըստէ նստում ա մին մին իրա գլխով անցկացածը նազլ անում հօրնը-մօրը, ոնց որ ես ձեզ նազլ արի: Իդ գշեր իրանց զադ-մազերը, ունեցած չունեցածը քօմմայ հաւաքում են, հարեւաններին, բարեկամներին բախշում, սրան, նրան տալի, իրանք զափ զարտակ վէ կենում, տանիցը դուս զալի: Նոր ամեն մինը մի աղունկի վրէն նստում են, ընկնում ճամփայ զպա աղունկների ամարաթը:

Էթում են, էթում են, էթում են, շատն ու քիչն

Աստօծ գիտալ, հասնում են էն գիւլի բաղը: Աղունկները դրանց ըտէ վեր են բերում, ամարաթի գոները բաց են անում, մնանում նեքս: Աղունկները իրանց խրխիքը հանում են, դառնում ամեն մինը մի մի հուրի-մալաք աղջիկ, որ չուտես, չը խմես, հէնց սրանց գիւլ ջամալին թամաշ անես,— էնքամ մի սիրունիկ զաղեր ին:

Նոր հարսանքի թագարէք են տենում: Էդ տղէն էդ իրեք աղջայ հեննայ պսակում ա—օխտն օր, օխտը գշեր հարսանքիք են անում: Ինչ քէֆ, ինչ ուրախութիւն, ինչ դափ ու զուռնայ, որ էլ հալ ու հէսար չը կար:

Նրանք հասան իրանց մուրազին, դուք էլ հասնէք ձեր մուրազին:

— Այ կնիկ, ասում ա, ըսկի ակը չենք տալի մեր հաւին. ով գիտայ հմի սատկել ա, որդնէ, ֆոտն աշխար ա վեր ունում, էթամ տանեմ դէն էլա զցեմ:

— Լաւ, այ մարդ, ասում ա կնիկը. գնա տես, թէ սատկել ա տար դէն զցա:

Իս մարդը էթում ա, հացատան դուռը բաց անում, ինչ տենում—հացատունը ընչանք օջորքը լիքը ձու ա. դու մի ասի, էն հաւն ա ածէ: Մարդը ուրախանում, աշխարով մին ա ըլնում: Էթում ա կնիկանը իմաց տալի. բա չես ասի, ասում ա, ըսենց, ըսենց բան: Մարդ ու կնիկ էթում են ամեն մինը մի քթոց վեր ունում, գալի էդ ձուաները բիրադի կրում իրանց կալը: Կրում են պրրծնում, ենայ իրանց գոմշները լծում են կամին, քշում. քշում են, քշում են, ընչանք ճաշ քշում են, ձուաները բիրադի փիսլում, խժուում ա, տենում են մի դհիցը աքլօր ա դուս գալի, մի դհիցը վառեկ: Վերջը որ շատ քշում են, տենում են բիրդան ձուաների միջիցը մի զաղ դուս էկաւ, փախաւ: Տէրը էդքամ աքլօրն ու վառեկը թողում ա ըտէ, ինքը զազի ետևիցն ընկնում, որ կալնի: Էթում ա, էթում, մինելի տեղ էթում ա, տենում հրէս մի մարդ իրանց զազը լծել ա կամին, կամ ա անում:

— Այ աղպէր, ասում ա, էդ մեր զազն ա, խի էք ձէ:

— Մենք ինչ իմանանք ձերն ա, ասում ա էդ մարդը, իրա ոտովն էկաւ մեր կալը, դէ տեհանք տէր, տիրական չը կայ, բերինք, լծեցինք. հմի ասում ես՝ ձերն ա, վէ կալ, տար. առ ըս էլ էրկու խալվար ցորէն դրա հ սիր:

Էդ մարդը էրկու խալվար ցորէնը առնում ա, լցնում

## Ս Ո Ւ Տ Տ Հ Ե Ք Ա Ռ

(Արարատեան բարբառով)

Կըլնի չիլնի մի մարդ, մի կնիկ: Սրանք շատ քեասիպ, դառն աղքատ, օրէն հացի մուրուցկան են ըլնում: Սրանք աւալ-ախըր մի հաւ են ունենում, ըն էլ էնթափուր հաւ, որ աղաքիցը էթողին՝ կտցով էր տալի, ետեւիցը էթողին՝ քացով. ընենց օր էս հաւի ահու սրանց քուչովը մարդ-մադաթ սիրտ չէր անում անց կենալ, էնքամ մի զուլում քեար զադ էր:

Գեղըցոնց ամալ-աջալը որ կտրում ա, օրէն մի օրը զալիս են տանուտէրի կուշտը գանգատ: Էդ տանուտէրն ա, կանչում ա հաւի տիրոնչը, հրամայում ա, որ եա հաւը մորթի, եա թէ չէ զցի մի զերգամբի, վրէն դռւուր շինի, որ դուս չը գայ, գնացող-էկողին չը զիպնի: Տէրն էլ չի դմշում մորթի, տանում ա, անում մի հացատուն, դռւուր, երթիկը դայմացնում, ծակ ու ծուկերը կալնում, թողում դալի: Լաւ:

Անց ա կենում ըսենց մի օր, էրկու օր, իրեք օր, մի շաբաթ, էրկու շաբաթ, մախլասի մի ամիս, էս հաւին ոնչ կուտ են տալի, ոնչ ջուր են դնում աղաքը, բալի սատկի, նրանից աղատուեն պրծնեն: Օրէն մի օրը էդ մարդի միտն ա ընկնում հաւը:

Հուալները, գեօղակները երեսներին փոռում, դայիմ կապում, բարձում զազին, քշում դպա տուն: Գալիս ա, դալի, հասնում ա իրանց տունը, ջռալները զազի վրիցը վեր ա դնում. վեր ա դնում, տեսնում ինչ—զազի մէջքը եարայ, լափաչայ ա դառէ: Մարդ ու կնիկ կը մնան մոլորած: Դէս կ'ընկնեն, դէն կ'ընկնեն, էս հարեւանի գուռը, էն հարեւանի դուռը, հայ դէս, հայ դէն, բու եան, օյ եան, դեղ, դարման չեն դտնի: Վերջը որ շատ կը հարցնեն, ման կը դան, մի մարդ սրանց կ'ասի, թէ էդ եարի դեղը պօպօքն ա, որ քսէք՝ ալբիալը կը լաւանայ: Սատանական դրանց երկրումն էլ ըսկի պօպօք չիլնում: Դէս են ընկնում, դէն են ընկնում, չեն դտնում. վերջը որ շատ ման են դալի, տեսնում են հրէնիկ մի ահլի, պառաւ կնիկ քուչի դռանը նստած ա

—Ա՛ նանի, ասում են, քեզ արքայութիւն, թէ քու որդիկերանց արեւը կը սիրես, բալի հոգապահուստ պօպօքի մանրունք ունենաս, մեր զազի մէջքը եարայ ա էլէ, ինչ կընի տաս, քսենք միջքին:

—Ա՛ որդիք, ասում ա, ես քօրփայ էրեխայի, հէրս չնդստանու պօպօք էր բերէ, կերանք. մի փէտ տառէք, քչփորեմ, տենամ, բալի ատամներիս արանքին մի կտոր մնացած ըլնի:

Մարդ ու կնիկ ուրախութիւններիցը էլ չեն իմանում ինչ անեն. ըտէ մի եքայ գերան ա վեր ընկած ըլնում, վեր են ունում, տալի էդ պառաւին: Էդ պառաւը էդ գերանովը ատամները քչփորում ա.—Էս դիհը, էն դիհը, սեղանքի տակիցը մի պճեղ պօպօք ա հանում, տալի դըրանց: Նրանք ուրախանում են, պառաւի ձեռը պաշում, պօպօքը վեր ունում, եդ դառնում իրանց տունը: Բերում են լաւ նարին ծեծում, քսում զազի միջքին:

Անց ա կենում մի օր, էրկու օր, իրեք օր, մի շարթ, էրկու շաբաթ, իրեք շաբաթ, մախլասի մի ամիս, մըն էլ տենում են էդ զազի միջքին մի եքայ պօպօքի ծառ ա դուս էկէ, էնքամ էլ պօպօք ա տուէ, որ հալ ու հէտաք չը կայ:

Էդ զազը Ասու իրան օրը էթում էր հանդը արածում, իրիկունը ինքն իրան գալի տուն: Հանդումը հօգաղները, լակոտ-լուկուտը ո՞րը քար էր գցում, ո՞րը փէտ էր գցում, ո՞րը ճիմ էր գցում, որ պօպօք վեր ածեն, ու տեն. չայիր-չիմանը, քոլ ու քօսը ընկնում էր պօպօքի ծառի ճղների արանքը, ընդերանք եքայ չայիր-չիման դուս գալի: Մարդիք նիլնում ին էդ չայիր-չիմանի վրէն, ընդէ բաղ ու բաղչայ գցում, քօստան զցում, վար անում, ցորէն, վարի ցանում. հօգաղները, չօբաններն էլ բերում ին ընդէ իրանց գառները, ոչսարը, տաւարը արածացընում: Օրէն մի օրն էլ մի մարդ նիլնում ա զազի միջքի քօստանը, մի ձմերուկ ա առնում, ուզում ա կտրի, ուտի, րիրդան դանակը խժում ա ձմերկի մէջը, էլ դուս չի դալի:—Ա՛ հարայ, դանակս, դանակս.— էլ որդէ, դանակը ձմերկի միջին բաթմիշ էլաւ, կորաւ: Էդ մարդը ձարը կտրած, շորերը հանում ա, մննում ձմերկի մէջը, որ դանակը հանի. ձմերկի միջին դէս ա ման դալի, դէն ա ման դալի, չի դտնում. վերջը որ շատ ման ա զալի, տեսնում ա հրէնիկ դագանակը ուսին մի չօբան:

—Ա՛ աղպէր, հարցնում ա չօբանը, ինչ մարդ ես, էս ձմերկի միջին ինչ ես շինում:

—Պանակս ընկել ա մէջը, ասում ա, ման եմ դալի, բալի դտնեմ:

—Է՛հ, ֆողը հալիդ, ասում ա չօբանը. էս թամամ էրկու տարի ա՝ իմ եքայ սուրու ոչսարը կորել ա էս

Ճմերկի միջին, մեռայ ման գալօն, չեմ կարում գտնի,  
դու հմի դանակդ ես ուզում գտնի:

Եղ խօսքը դանակ կորցնողի սրտին կպնում ա, վրա  
ա հասնում նրան որ ծեծի. — սա նրան, նա սրան, սա  
նրան, նա սրան, ըստէ էնքամ իրար տալիս են, որ ձմերուկը  
ժաժ ա գալի, դազի միջքիցը գըրըմփալէն վեր ընկնում  
դետինը, միջիցն էլ մի ալափստրակ ա դուս գալի, փախնում:  
Փախնելու վախտը էդ ալափստրակի պօչի տակիցը մի  
թղթի կտոր ա վեր ընկնում: Հօդաղները էդ թղթի կտոր-  
ւը վեր են ունում, տանում զեղը, տէրտէրին տալի որ  
կարդայ: Տէրտէրը բաց ա անում, կարդում, տենում գը-  
րած ա. «Անտ, սնտ, սնտ». — եանի թէ էս դազի հէ-  
քաթը քօմմայ սուտ ա:



## ՀԱԼԱԼԸ ԶԵ ՀԱՐԱՄՈՂ ԿՆԻԿԸ

(Արարատեան բարբառով)

Աւալ ժամանակին ըլնում ա չիլնում մի մարդ, մի կնիկ:  
Սրանք շատ դառն աղքատ, անճար են ըլնում: Օրէն մի  
օրը մարդը միտք ա անում, ասում ա. — Վէ կենամ, էթամ  
ուրիշ երկիր աշխատանքի, բալի միքանի շալի աշխա-  
տեմ, բերեմ օղուշաղ պահեմ, ընչանք տենանք վերջներս  
ինչ ա ըլնում. Ասոծ ողորմած ա, հալբաժ մեզ մի լիս  
ու ճար կ'անի, էրկու դռնից մի դուռը բաց կ'անի: —  
Կանչում ա կնկանը.

— Այ կնիկ, ասում ա, ուզում եմ էթամ ուրիշ եր-  
կիր աշխատանքի. ինչ կ'ասես:

— Ի՞նչ պտի ասեմ, այ մարդ. թէ դիտա՞ ձեռդ  
զադ կ'ընկնի, մի բանի տէր կը դառնաս, էթամ լաւ  
կ'անես. եանի պարապ-սարապ ման գալօն ի՞նչ պտի ըլնի:

— Լաւ, ասում ա, որ էթամ՝ խօսք տալիս ես, ըն-  
չանք իմ զալը աբուռ-հայով կենաս, քու հալալը ըլ հա-  
րամես:

— Հա, ասում ա կնիկը, խօսք եմ տալի. թէ քեզ  
մուխաննաթութիւն արի՝ ի՞նչ ուզում ես արա, արինս  
քեզ հալալ ա:

— Ան, ասում ա մարդը, բայս որ ըտենց ա՞ կ'էթամ: Յէքսի օրը ճամփի թաղարէք ա տենում, մի քանի ամսուայ պաշար վեր ունում, վէ կենում ընկնում ճամփայ: Էթում ա, էթում ա, էթում ա, շատն ու քիչն Աստօծ գիտայ, էս քաղաքը, էն քաղաքը, էս գեղը, էն գեղը, որդի ռաստ ա դալի, մնում ա, բանում, փող աշխատում, էլի վէ կենում էթում իրա ճամփէն: Ըսենց մի տարի, էրկու տարի, իրեք տարի, աշխարէ աշխար, երկրէ երկիր ման ա դալի, ընչանք քիչ-միչ փող ա շինում, նոր ասում ա՝ վէ կենամ, էթամ մեր երկիրը: Վեր ա կենում դալի: Գալիս ա դալի, շատն ու քիչն Աստօծ գիտայ, մի օր, էրկու օր, իրեք օր, մի շաբաթ, էրկու շաբաթ, իրեք շաբաթ, մախասի մի ամիս՝ հասնում ա իրանց երկրի սնուռը: Ծտէ սրան մի ցելոր ա ռաստ դալի:

— Արի, ասում ա ինքն իրան, մի սրան հարցնեմ, տենամ իմ կնիկը ո՞նց ա, ո՞նց չի, իրա տուած խօսքը պահել ա թէ չէ: Մօտանում ա դրան, ասում.

— Բա՛ր՝ աջողում, աղպէր:

— Բարով, հազար բարին, ասում ա ցելորը:

— Փլան գեղիցն ես, հարցնում ա:

— Հա, Փլան գեղիցն եմ, ասում ա ցելորը. իսի՞ որ:

— Քեզ մի բան եմ ուզում հարցնեմ, չեմ գիտայ դրուստը կ'ասես, թէ չէ:

— Կ'ասեմ, իսի՞ չեմ ասի, ասում ա ցելորը:

— Քլան մարդի կնկանը ճանանչում ես:

— Լաւ, շատ լաւ եմ ճանանչում: Ի՞նչ ես ասում, որ մարդը գնացել ա զարբութիւն աշխատանքի:

— Հա, հէնց էն: Ո՞նց ա, լաւ ա. հօ դարտ չի անում մարդի հմար:

— Ի՞նչ պտի դարտ անի, ասում ա ցելորը ծիծաղալօն. ինչն ա բոլ մարդը...

Պարդը էս որ լսում ա, մատը կծում ա. — Բալի, ասում ա ինքն իրան, կայ ըս կայ, ըստէ մի բան կայ: — Գառը, տխուր վեր ա կենում, գալի իրանց գեղը: Կնիկը մարդին տենալու բաշտան, ուրախանում, աշխարով մին ա ընում: Համայ մարդը որ ասես ձէն, ծպտուն չի հանում. նօթերը կիտած էթում ա մի պուճախում նստում: Էս կնիկն ա, էն սհաթը էթում ա լագանով ջուր բերում, մարդի ոնները լուանում, շորերը փոխում, եննայ հացի թաղարէք ա տենում, որ մարդին հաց տայ: Հաց են ուտում, պլծնում, թէք են ընկնում, քնում: Կնիկը մընում ա միտք անելոն, թէ էս ինչ ա պատահէ իրա մարդին, որ ըսենց նօթերը կիտել ա, որ ասես չի խօսում: — Հալբաթ, ասում ա, գնացել ա զարբութիւն, չի կարացէ փող աշխատի, դարտակ վեր ա կացէ, էկէ՝ ընդուր ա ըսենց դառը, տխուր, եա ով գիտայ ճամփին մի փորձանք ա էկէ գլուխը, չի ասում: — Պախլաս, խեղճ կընիկը ինչ անում ա, չի անում, մարդի դարտը չի կարում իմանայ:

Ըսենց անցկացաւ մի քանի վախտ, մի օր, էրկու օր, իրեք օր, մախասի մի շաբաթ, օրէն մի օրը մարդը կնկանը խարբութիւնով տարաւ գեղիցը դուս, ընդը տուեց, սրպանեց, ինքը էլ եղ դառաւ, էկաւ գեղը: Ասու հրամանով ալբիալը էդ սրպանած կնկայ տեղը աղբուր դուս զցեց: Խե աղբուրը ընենց մի անմահական ջուր ունէր, ընենց մի անմահական ջուր ունէր, որ մեռելն էլ իսմէր, էն սհաթը կը սաղանար, ընդէ կը կաննէր:

Ըսենց անցկացաւ մի օր, էրկու օր, իրեք օր, մախասի մի շաբաթ, օրէն մի օրը մի բէզրգեան իրա մարդ-

կերանցով անցկենալիս ա ըլնում էդ գեղի կշտովը: Հենց  
հասնում ա էդ կնկայ սրպանած տեղը, մութը գետինը  
կոխում ա:— Էստէ վի գանք, ասում ա, հաց-մաց ուտենք,  
դնջանանք, գշերը մնանք, նոր էն զլխէն վէ կենանք  
ընկնենք ճամփայ:— Էդ աղբը կշտին վեր են գալի, չա-  
փեր տալի, մնում: Որ վեր են գալի պրճնում, տենում են  
էդ աղբը կշտին հրենիկ մի սրպանած կնիկ: Ասում են  
հալբաթ իրա մարդին մուխաննաթութիւն ա արէ, նա  
էլ սրպանել ա, բերէ, զցէ ըստէ: որ շան ու գիլի փայ  
ըլնի: Բերում են կրակ անում, որ կիրակուր էփեն: Իրանք  
էլ կողադից սաւայի զադ չեն ունենում: Թաւոլ ջուր են  
դնում կրակի վրէն, որ մի քանի խոտոց կողադ խաշեն:  
Կողագը կոտորում են, ածում թաւէն թէ չէ, ալբիալը  
սաղանում ա, թաւէ միջիցը դուս գալի, ընկնում գիտի-  
նը: Քօմմայ մնում են զարմացած, թէ էս աղբը ջուրը  
ինչ զօրութիւն պտի ունենայ, որ կոտորած կողագը գլ-  
ցում ես մէջը՝ սաղանում ա: Ճատ են միտք անում,  
խելք խելքի տալի, ինչ անում են չեն անում, չեն կա-  
րում իմանայ:

— Էկէք փորձենք, ասում ա բէզրգեանը. Էս սրպա-  
նած կնկայ վրէն էլ էդ ջրիցը շաղ տանք, տենանք կը  
սաղանայ թէ չէ:

Բերում են շաղ տալի: Ճաղ տալու բաշտան էդ կը-  
նիկը սաղանում ա, վէ կենում նստում, ըլնում ա ոնց որ մօ-  
րէն մին: Քօմմայ մնում են սառած իրար երեսի մտիկ անելոն:

— Ի՞նչ կնիկ ես, հարցրեց բէզրգեանը. Էս ո՞նց ա  
էլէ, որ քեզ սրպանել են, բերէ, զցէ ըստէ:

Նոր էդ կնիկը ըստէ նստեց մին մին նաղ արեց  
իրա զլխով անցկացածը, ոնց որ ես ձեզ նաղ արի: Բէ-  
զրգեանը էս որ իմացաւ, հարցրեց.

— Զես գայ քեզ տանեմ շինեմ ինձ կնիկ. զաթի  
ես էլ աղապ՝ էթանք զլխներս դինջ իրար հեննայ ապ-  
րենք:

— Զէ, բէզրգեանը սաղ ըլնի, ասեց կնիկը. ես մարդ  
ունեմ, իմ հալալը չեմ հարամի:

— Զէ, մըն էլ հարցրեց բէզրգեանը:

— Զէ, ասեց կնիկը:

— Տես կը փօշմանես, ասեց բէզրգեանը:

— Զեմ փօշմանի, ասեց. զու քու Աստօծ, ինչ ու-  
զում ես՝ արա:

Բէզրգեանը շատ հերսոտեց էդ կնկայ վրէն, նօքար-  
ներին հրամայից, մի քառասուն գաղանոց ֆոր փորեն,  
նրան զցեն մէջը, մի եքայ քար էլ դնեն ֆորի բերնին,  
որ ընդիան դուս չը գայ: Նօքարները մի քառասուն գա-  
ղանոց ֆոր փորեցին, ինեղն կնկանը զցեցին մէջը, մի  
քար էլ դրին ֆորի բերնին: Առաւօտը լիսը բացուեց թէ  
չէ, սրանք իրանց զադ-մադերը հաւաքեցին, վէ կացան ըն-  
կան ճամփայ:

Էդ կնիկը մնաց մէն մէնակ ֆորի միջին: Ճատ ձէն  
տուեց, հարայ կանչեց, աղաչանք, պաղատանք արեց,  
հաւարին հասնող չէլաւ: Անց ա կենում ըսենց մի օր,  
էրկու օր, իրեք օր, օրէն մի օրը մի ուրիշ բէզրգեան ա  
գալի, էդ ճամփովը անցկենում, էդ աղբը կշտին վեր  
ա գալի, չափեր տալի մնում, որ մի քիչ դնջանայ, հաց-  
մաց ուտի, էլ վէ կենայ էթայ իրա ճամփէն: Վէ գալու  
բաշտան մի նուոցի ձէն ա ընկնում անկաջը:

— Էս ինչ նուոցի ձէն ա, հարցնում ա բէզրգեանը  
նօքարներին. մի գնացէք տեհէք էդ ձէնը որդիան ա  
գալի:

Նօքարներն էթաւմ են գէս ընկնում, դէն ընկնում,

Էս դիհը ման գալի, էն դիհը ման գալի, անկաջ դնում,  
մախլասի որ շատ ման են գալի, տենում են հրէսիկ մի  
քառասուն գաղանոց ֆոր, էդ ֆորի միջիցը մի նուոց ա  
գալի: Փորի բերնի քարը եդ են զցում:

— Եդ նվ ես, հարցնում են նօքարները:

— Ասո՞ւ սիրուն, ձէն ա տալի կնիկը ֆորիցը, ինչ  
ըստիան ազատէք:

Ալբալը բերում են պարան կախ անում ֆորը, կը-  
նիկը կապում ա մէջքը, քաշում են՝ հանում: Հանում են  
լինչ տենում — մի սիրուն, նաշխուն կնիկ: Աղաք են ա-  
նում դրան, բերում բէզրգեանի կուշոր, բէզրգեանին  
նաղլ անում թէ՝ ըսենց, ըսենց, ըսենց բան:

— Ի՞նչ կնիկ ես, հարցնում ա բէզրգեանը, ըստե-  
րանք լինչ ես շինում:

Կնիկը նստում ա ըստէ մին մին նաղլ անում իրա  
հլխով անցկացածը, ոնց որ ես ձեղ նաղլ արի:

— Ինձ չես առնի, հարցնում ա բէզրգեանը. դու  
ինձ կնիկ, ես քէ մարդ:

— Զէ, բէզրգեանը սաղ ըլնի, ասում ա կնիկը. ես  
մարդ ունեմ, իմ հալալը ոնց հարամեմ:

Էս խօսքի վրէն բէզրգեանը սրտի հերսիցը չի իմա-  
նում ինչ անի: Նօքարներին հրամայում ա էդ կնկանը  
դնեն մի դութիկ մէջ, դութիկ բերանը կալնեն, տանեն  
զցեն ծովը: Նօքարները բերում են մի դութիկ շինում,  
դրան դնում մէջը, դութիկ բերանը դայիմ կալնում, տա-  
նում զցում ծովը, թողում գալի:

Էդ դութիկը ջրի երեսին տըմբալը լուսական էթում ա:  
իթում ա, էթում, մի օր, էրկու օր, մախլասի իրեք օր,  
քամին քշում ա, հանում ջրի դրաղը: Բտէ ծովի դրա-  
ղին մի թօռչի էր կենում. ինքն էր մի պառաւ մէր,

էլ զադ չ'ունէր. էրկսով էդ անվիրի-վիրի տեղը տուն ին  
շինէ, գլխները գինջ իրանց հմար ապլում էն: Խս թօռ-  
չին ջրի երեսին դութիկը որ տեհաւ, ուրախացաւ, աշ-  
խարով մին էլաւ. հէնց իմացաւ միջինը փող ա եա ապ-  
րանք եա մի ուրիշ զադ, ասեց. — կը տանեմ, կը հարցու-  
տանամ. թօռը գցեց, հանեց: Աըռունչալօն էդ դութիկը  
դրեց շալակը ու դուկ դպա տուն: Որ հասաւ տուն, բե-  
րին դութիկի բերանը բաց արին. բաց արին՝ լինչ տենան—  
միջին մի թրջուտծ, տըմբսկուած կնիկ, որ սովածու-  
թիւնցը լրարէ, դառել ա չոր չօփ, պինչը բոնես ֆո-  
դին կը տայ:

— Փառք քեզ, Աստօծ, ասեցին, փառքի շատ ըլնի, հալ-  
բաթ էս էր մեր զսմաթը:

Թօռչու մէրը բերում ա էդ կնկանը տաք ջրով չին-չին  
լեղացնում, իրա հին շորերիցը հազցնում, եննայ հացի  
թաղարէք ա տենում. միքանի ձուկն ա խաշում, կիրա-  
կուր էփում, մախլաս ինչ որ Աստօծ տուել էր՝ բերում ա  
դնում աղաքը որ ուտի: Խեղճ կնիկը զաթի սոված, նըխ-  
տից ընկած՝ հացը որ տեհաւ, գիլի նման վրա պրծաւ  
հացին: Կերաւ, կշտացաւ, Աստօն փառք տուեց, թօռ-  
չուցը, նրա մօրիցը շնորհակալ էլաւ, դրադ քաշուեց:

— Հմի ասա տենանք, հարցը թօռչին. Էս լինչ  
բաս ա, քեզ նվ բերեց գցեց ծովը:

— Բա չես ասի, ասեց էդ կնիկը, ըսենց, ըսենց,  
ըսենց բան: — Նոր նստեց ըստէ մին մին նաղլ արեց նրանց  
իրա գլխով անցկացածը, ոնց որ ես ձեղ նաղլ արի:

— Ինձ չես առնի, հարցը թօռչին. դաթի ես էլ  
ազապ՝ մարդ ու կնիկ ըլնենք, ըստէ իրար հեննայ ապ-  
րենք:

— Զէ, ասեց էդ կնիկը, ես մարդ ունեմ, իմ հա-

լալը ո՞նց հարամեմ: Ուզում ես, ասեց, արի քիր ու աղպէր ըլնենք:

— Ըլնենք, ասեց թօռչին. թող քու ասածն ըլնի:

Քսորուանից դէնը թօռչին քանի էթում էր ձկան, Ասսու հրամանավ, ամեն թոռի անհէսաբ ակն ու մարդարիտ էր հանում ծովիցը. համայ խեղճը չէր իմանում ըտօնք թանգ բաներ ա, որ տանի ծախի, բոլ փող կը տան: Քսենց էնքամ ակն ու մարդարիտ հանեց ծովիցը, որ տանը էլ դնելու տեղ չը կար—էնքամ շատ էր:

Օրէն մի օրը միտք արեց, ասեց՝ արի մի քանի հատ տանեմ քաղաք, շանց տամ, տենամ կ'առնեն: Քաղաք հասաւ թէ չէ, դնաց մի զարգեարի դուքան, ակն ու մարդարտները հանեց, շանց տուեց:

— Հատին լիսուն մանէթ տամ, ասեց զարգեարը:

Թօռչին ծիծաղաց, էնց լմացաւ տնաղ ա անում:

— Փէ լաւ, հարիր մանէթ տամ, վրա բերեց զարգեարը:

Թօռչին էլի ծիծաղաց: Վախլաս, գլխներդ ինչ ցաւացնեմ, զարգեարը ինչ գին ասում էր, թօռչին ծիծաղում էր: Էնքամ արեց, որ հատը կինդ հարիր մանէթով ծախեց:

— Այ ուստայ, ասեց թօռչին, որանցից որ էլ բերեմ՝ կ'առնեն:

— Կ'առնեմ, խի չեմ առնի, ասեց զարգեարը:

— Բաս որ ըտենց ա, ասեց, կը բերեմ:

Թօռչին ուրախ ուրախ փողերը դրեց ջէբը, եղ դառաւ, էկաւ տուն: Էկաւ մի աղլուխ լիքը լցրեց էն ակն ու մարդարտներիցը, թազադան վէ կայաւ էկաւ քաղաք. գնաց դուզ էն զարգեարի դուքանը:

— Բար՝ աջողում, ուստայ, ասեց թօռչին:

— Այ բալով, հազար բարին, խէրին, թօռչի աղպէր. ամեն ճամփէդ սալամաթ. ո՞նց ես, լաւ ես:

— Հրէս բերել եմ, ուստայ, տես կը հաւանես:

Ասեց ու աղլխով լիքը մարգարտները դրեց աղաքը: Զարգեարը աղլուխը բաց արեց, համբրեց, հատը հինգ հարիր մանէթով վէ կալաւ, հանեց փողը նաղդ տուեց, ձեռիցն առաւ: Փէ, թօռչի ու էնքամ փող. — ուրախութիւնիցը քիչ էր մնացէ զժուէր:

— Ի՞նչ առնեմ, ինչ չ'առնեմ ըստիան տանեմ, որ լաւ ըլնի, ասեց թօռչին: Միտք արեց, միտք արեց, ասեց. — Արի բօլ ցորէն առնեմ, տանեմ լցնեմ ամբարները, միքանի տարուայ պաշար հազրեմ, որ մըն էլ վէ չը կենամ, զամ ըստէ ցորնի:

Ինչքամ փող ունէր ձեռին, բիրազի տուեց ցորնի: Առաւ, լցրեց ջուալները, բերանները դայիմ կապեց, քրէհ-դարներ բունեց, որ տանեն: Քրէհդարները տարան հասցրին ծովի զրաղը: Թօռչին բերեց իրանց ամբարները քօմմայ լցրեց. — Հա կէ, թէ պտի հատնի:

Անցլացաւ միքանի վախտ, էդ հալալը չը հարամող կնկայ երկիրը սով ընկաւ: Սով եմ ասում, էնթավուր սով, որ Աստօծ փրկի, ազատի, իմ միս կտրողին ուաստ չը զայ. — Հէրը որդուն էր ուտում, աղպէրը՝ աղպօրը, բարեկամը՝ բարեկամին. մախլասի, ով ում ձեռն ընկնէր, նըրան էլ պլծնում չը կար, սաղ սաղ պտի ուտէր, կշտանար, զրաղին կաննէր — ընենց մի զուլում սով էր: Թօռչու ինչ վէջն էր, թէ աշխարքը սով ա ընկէ. ամբարները լիքը, թէկուզ տասը տարի էլ ուտէին՝ չէր հատնի:

Էդ սով ընկած երկրի մարդիքը իմացան, որ էդ թօռչու ամբարները լիքը ցորէն ա, ամեն դհից վեր ին կենում, զալի սրա կուշտը. սա էլ քօմմքին տալիս էր,

ճամփու դնում: Մի օր էլ էդ հալալը չը հարամող կնկայ մարդը ու էրկու բէզրգեան էկան ցորնի. էդ էն էրկու բէզրգեանն ին, որ իրանց քարւանովը անցկենալիս՝ էդ կնկանը ռաստ էկան, ուզեցան վրէն պատուի, նա դաբուլ չ'էլաւ, ասեց՝ ես իմ հալալը չեմ հարամի. նրանք էլ բերին, էն օղիէքը հաղացին սրա գլուխը: Էդ կնիկը սրանց տենալու բաշտան ճանանչեց, համայ լիս չ'ընկաւ, ասեց.—տենամ սրա վերջն ինչ ա ըլնում: Նրանք հօ՞ որ ասես չը ճանանչեցին: Ախար նրդիան որդէ. ում մտքովը կ'անցկենար թէ էդ կնիկը սաղ կը մնայ, մի օր նրա երեսը սրանց երեսին կ'առնի:

Էդ հալալը չը հարամող կնիկը մի օր բերեց դօնաղ-լըդ սարքեց, իրա մարդին ու էդ էրկու բէզրգեանին կան-չեց իրա կուշտը դօնաղ: Նրանք էլ վէ կացան, էկան: Էդ կնիկը նրանց ընենց մի քէֆ շանց տուեց, ընենց մի ուրախութիւն շանց տուեց, որ էլ չեմ կարայ ասի: Քօմ-մըքով էլ որ լուլ ու կուլ հարբեցին, էդ կնիկը վէ կա-լաւ թէ.

— ի'կէք, ասեց, ամեն մարդ իրա գլխով անցկացա-ձը նաղլ անի, անկաջ անենք:

— Լաւ, ասեցին էն էրկու բէզրգեանը ու էդ կնկայ մարդը. էկէք:

Էդ կնիկը աղաք մի բէզրգեանին հարցրեց:

— Բէզրգեանը սաղ ըլնի, ասեց. դէ նաղլ արա տե-նանք ինչ ա անցկացէ քու գլխովը:

— Սրանից մի քանի տարի աղաք, ասեց էդ մի բէ-զրգեանը, նօքարներիս հեննայ ճամփայ ի էթում: Իկանք, է-կանք, մի աղբը կշտի մութը զետինը կոխից: Վէր էկանք ըտէ, չադիր տուինք, կացանք. վարաւուրդ արինք, տեհանք էդ աղբը կողքին հրէնիկ մի կնիկ սրպանած, վէ

դցած: Բերինք էդ աղբը ջրիցը շաղ տուինք կնկայ վը-ըէն, ալբիալը սաղացաւ, ընդէ կաննեց: Ուզեցայ հեննէն պսակուի, դաբուլ չ'էլաւ, ասեց՝ ես մարդ ունեմ, իմ հալալը չեմ հարամի: Ես էլ, սրտիս հերսլցը, հրամայեցի նօքարներիս՝ մի քառասուն զազանոց ֆոր փորեն, էդ կնկանը զցեն մէջը, մի քար էլ դնեն ֆորի բերնին: Են-նայ շատ էլ փօշմանեցի, համայ էլ ուր, բանը բանից անց էր կացէ: Հրէս էս ա իմ գլխով անցկացածը, որ ընչանք օրս սրտիս միջին դարտ ա դառէ, գշեր, ցերեկ ինձ էրում ա:

Եննայ մէկել բէզրգեանին հարցրեց:

— Բէզրգեանը սաղ ըլնի, ասեց էդ կնիկը, հմի դօրը քունն ա. ասս տենանք քո՞ւ գլխովը ինչ ա անց կացէ, քո՞ւ դարտն ինչ ա:

— Իմ դարտը նրանից շատ ա, ասեց մէկել բէզրգեանը: Ես էլ հէնց էդ կնկանը ռաստ էկայ, ֆորիցը հանեցի:— Ինձ չ'ս առնի, հարցրի:— Զէ, ասեց, չեմ առնի. ես մարդ ունեմ, իմ հալալը չեմ հարամի:— Ես էլ հերսուտեցի էդ կնկայ վրէն. նօքարներիս հրամայեցի, դրա ձեռ ու ոտը կապեն, դնեն մի դուժկի մէջ, տանեն զցեն ծովը: Խեղճ կնիկ, ով գիտայ հմի ծովի ձկների փայ ա էլէ, պղծէ: Եննայ ես էլ փօշմանեցի, գլխիս փայ տուի, հա-մայ էլ ուր, բանը բանից անց էր կացէ:

Թօրը գալիս ա իրա մարդին: Վերջը նրան ա հար-ցնում: Կա էլ թէ.

— Չունքի դուք էրկուվ էլ ձեր մեղքը շլնքներդ ա-ռաք, ես էլ իմ մեղքն եմ շլինքս առնում: Էդ կնիկը որ կար՝ իմ հալալ, թագն ու պսակ կնիկն էր. Ես նրան խաբլութիւնով տարայ գեղիցը դուս, ընդէ սըպանեցի,

ՀԵՆԳ իմացայ իրա հալալը հարամել ա: Ի՞նչ ասեմ, ես  
բիրագնիցդ էլ մեղաւոր եմ:

—Պրծմք, հարցրեց էդ կնիկը:

—Հա, պրծանք, ասեցին:

—Դէ հմի զօրն իմն ա, ձէն տուեց ընդիան կնիկը:  
Էլ հալալը չը հարամող կնիկը ես եմ, որ կամ: Աստօծ  
ինձ ամեն փորձանքից ազատեց, սաղսալամաթ էօ ծովի  
դրաղը հասցրեց, որ մի օր իմ դրստութիւնը էրևայ թէ  
ես հալալը հարամող կնիկ չեմ:

Ես որ լսեցին, իրեքով էլ մնացին էշ կտրած, իրար  
երեսի մտիկ անելօն: Ամօթու պապանձուել ին, մնացէ.  
Ժին կարում մի խօսք էլա ասի: Էն սհամքը իրեքով էլ  
էկան, ընկան էդ կնկայ ոնները՝ մեղայ էկան: Կա իրե-  
քին էլ բաշխեց:

Սրանք մի քանի օր էլ կացան ըտէ. նո՞ր ճամփի  
թագարէք տեհան, էդ թօռչու ու նրա մօր հեննայ մնաս  
բարով արին, չորսով վէ կացան ընկան ճամփայ դպա  
իրանց երկիրը:

Ասսանից իրեք խնձոր վեր ընկաւ. —մինն ասողին,  
մինն ասիլ տուողին, մինն էլ անկաջ դնողին:



## ԲԵՇՈԼՎԱՐ ՏՂԵՎ

(Արարատեան բարբառով<sup>1)</sup>)

Աւալ ժամանակին ըլնում ա չինում մի թագա-  
ւոր: Ես թագաւորը ունենում ա իրեք տղայ: Ես տղէքը  
քանի պուճուր ին, զլխները դինջ ապրում ին, համայ որ  
մենծանում են, իրանց եաշն առնում, էլ «Զըները մի առ-  
ուով չի էթում». — Ասու իրան օրը ուշունց, կրիւ, դալ-  
մաղալ, տուր ու դմփոց, մախլասի էլ իրար հեննայ եօլլա  
չին էթում: Յրէն մի օրը դալիս են իրանց հօրն ասում.

— Թագաւորն ապրած կենայ, չունքի իրար հեննայ  
չենք կտրում եօլլա էթայ, ուզում ենք բաժանուի, ինչ  
կ'ասես:

— Գո՞ւք դիտաք, այ որդիք, ասում ա հէրը. որ եօլլա  
չէք էթում, ամեն օր իրար «եախից ձաւար էք հաւա-  
գում», լաւն էն ա՝ բաժանուէք, ամեն մարդ իրա փայն  
առնի, էթայ իրա հմար տուն դնի, ո՞նց ուզում ա ապրի:

Ես թագաւորն ա, բերում ա տղէքանցը ամեն մէ-  
կին իրա փայը տալի, ճամփու դնում: Ես աղարտանցից  
ամեն մէկը իրա փայն առնում ա, էթում ա իրա հմար

<sup>1)</sup> Տես «Հէքիաթներիս» Ե. դիրք, երես 71, «Աստծուն զան-  
դատ զնացող մարդը», Կոռու բարբառով դրած:

զոկ տուն գնում, պսակում, տնաւորում, ապրում: Համայ մենծ աղպէրը քօմմքից բէզօլվաթ դուս էկաւ. իրա փայը տարաւ սաղ կերաւ, փչացրեց, զրաղին կանեց: Դնաց էլ եղ հօր եախէն կպաւ թէ՝ իրա փայը աղպօրտանց փայիցը քիչ ա էլէ. զոռով, գիւջով էնքամ արեց, որ հօրիցը ինչքամ աղաք էր առէ, մի էնքամ էլ հմի առաւ: Էլի տարաւ կերաւ, էն դիհը կանեց: Էկաւ հօրիցը էլի թաղադան փայ ուզեց, տարաւ ըն էլ խժուց, կունդ արեց, էլ եղ էկաւ հօր եախէն կպաւ, թաղադան փայ ուզեց: Մախլաս, ըսենց չորս-հինգ հետ փայ ուզեց, տարաւ կեր ու խումի տուեց, փչացրեց, մնաց մատր լպստելոն:

Վերջը էս մենծ աղպէրը ինքն իրան միտք արեց. — Մի էթամ, ասեց, Ասու կուշտը գանդատ, տենամ հո ինչ մեղքի տէր ի, որ իմ մալ ու դոլվաթը ըս էլ քանի հետ ձեռիցս առաւ, թողաց աղքատ, քեափրի ֆողումը, էն ինչ աղպօրտանցս դհա հարստացրեց, դհա մալ ու դոլվաթի տէր շինեց: — Շամիի թաղարէք տեհաւ, միքանի ամսուայ պաշար վէ կալաւ, վէ կացաւ, ընկաւ ճամփայ՝ դպա Ասու կուշտը:

Էկաւ, էկաւ, էկաւ, մի օր, էրկու օր, իրեք օր, չորս օր, մախլասի մի շաբաթ, մի մէշի միջի սրան մի եարա-փարէն կոխած, քոսոտ արջ ուաստ էկաւ: Արջը սրան որ տեհաւ, հարցրեց.

— Թաղաւորի ցեղ, էդ ուր ես էթում:

— Էթում եմ, ասեց, Ասու կուշտը գանդատ. էնքամ մալ ու դոլվաթ, էնքամ հարստութիւն ունէի, քօմմայ ձեռիցս գնաց, մնացի ըսենց աղքատ, օրէն հացի մորուցկան: Հմի էթում եմ, ասեց, Ասու կուշտը, մի հարցնեմ, տենամ մեղքս ինչ ա, որ ինձ էս օրը գցեց:

— Բաս որ ըտենց ա, ասեց արջը, ևս էլ իմ դաբար քեզ ասեմ. որ Ասու կուշտը հասնես, իմ դհիցն էլ զանդատ արա: Խսքամ տարի ա, ասեց, եարալ-իարի միջին կորել եմ, ինչ անում եմ, չեմ անում, լաւանալու ճար, իլլամ չինում. մի հարցրա, տես իմ վերջը ինչ պտի ըլնի:

— Աչքիս վրէն, ասեց, կը հարցնեմ. եղ գալիս քեզ մի չուղաբ կը բերեմ:

Ըսենց գնաց, գնաց, շատն ու քիչն Ասուծ դիտայ, հասաւ մի մենծ քաղաք: Խս քաղաքի միջուն անց կենալիս սրան մի մարդ ռաստ էկաւ:

— Բարով, թագաւորի ցեղ, ասեց էդ մարդը:

— Բարով, Ասու հազար բարին, ասեց թագաւորի տղէն:

— Էդ ուր ես էթում, հարցրեց:

— Էթում եմ Ասու կուշտը գանդատ:

— Որ էթում ես, ասեց, ինչ կ'ըլնի իմ դհիցն էլ զանդատ անես: Մի եքայ գիւլի բաղ ունեմ, ասեց, որ Ասու ինչ բար ու նուրար ասես՝ միջին կայ. համայ որ գարունքը գալիս ա, ծառերը ծաղկում են, բար բռնում, դեռ չը հասած բարը վեր ա տալի: Ասուն մի հարցրա, տես սրան ինչ պտի ըլնի:

— Լաւ, ասեց թագաւորի տղէն, քու գանդատն էլ տեղ կը հասցնեմ:

Ասեց, տուեց, անցկացաւ: Գնաց, գնաց, գնաց, մի օր, էրկու օր, իրեք օր, դուս էկաւ մի ուրիշ թագաւորի երկիր: Էդ երկրի թագաւորը սրա գալը որ իմացաւ, կանչեց իրա կուշտը:

— Ի՞նչ մարդ ես, հարցրեց թագաւորը. էդ ուր ես էթում:

— Փլան թագաւորի տղէն եմ, ասեց. էթում եմ Ասու կուշտը գանդատ:

— Որ էթում ես, ասեց, ինչ կ'ըլնի իմ գանդատն էլ տեղ հասնես: Ես, ասեց, էսքամ տարի ա թագաւորութիւն եմ անում, ինչ անում եմ, չեմ անում, ինչ պատիճ ասես՝ տալիս եմ, չեմ կարում ընենց անի, որ իմ երկումը գողովթիւն, մարդասպանովթիւն չը պատահի: Ասուն իմ դհիցը գանդատ արա, տես իմ ճարն ինչ պտի ըլնի. ո՞նց անեմ, որ կարենամ էս խալխի հախիցը գայ:

— Քնիտ աչքիս վրէն, թագաւորն ապրած կենայ, ասեց. քու գանդատն էլ տեղ կը հասցնեմ:

Ասեց, տուեց, անցկացաւ: Գնաց, զնաց, գնաց, մի օր, էրկու օր, իրեք օր, մի շաբաթ, էրկու շաբաթ, իրեք շաբաթ, մախլասի մի ամիս, զշեր դնաց, ցերէկ դնաց, լիս դնաց, մուլթ դնաց՝ հասաւ աշխարքի վերջը. էն ա պտի ծովն ընկնէր, Ասոծ իրա հրեշտակը զրկեց, որ էթայ նրան ճամփից եղ գարձնի, հարցնի, տենայ նրա գանդատն ինչ ա: Հրեշտակը դնաց թագաւորի տղի աղաքը կտրեց:

— Ի՞նչ մարդ ես, էղ մւր ես էթում, հարցրեց հրեշտակը:

— Փլան թագաւորի տղէն եմ, ասեց, էթում եմ Ասու կուշտը գանդատ: Աղպօրտանցիցս բաժանուեցի, ասեց, նրանք իրանց փայն առան, դնացին տուն ու տեղ դառնան, հարստացան. ես ինչ ունէի, չունէի կերայ, փչացրի, վերջը միտք արի զամ Ասու կուշտը գանդատ, տենամ ինչ մեղքի տէր ի, որ ինձ էս օրը զցեց:

— Ես որ քու շարթերը քօմմայ կտրեմ, ասեց հրեշտակը, զարուլ ես:

— Ղաբուլ եմ, ասեց. զաթի ես էլ զրա հմար եմ

աշխարէ աշխար, երկրէ երկիր ընկէ, որ իմանամ իմ ճարն ինչ պտի ըլնի:

— Ես, ասեց, Ասու հրեշտակն եմ. Ասոծ ինձ զրկեց, որ քեզ ասեմ, էթաս էլ եղ քու երկիրը, ընդէ կարցրած հարստութիւնդ էլ եղ քու ձեռք կ'ընկնի:

— Ասու փառքը շատ ըլնի, ասեց թագաւորի տղէն, ո՞նց որ հրամայել ա, ընենց էլ կ'անեմ: Ո՞ի ուրիշ գանդատ էլ ունեմ, ասեց: Շամփին զալիս մի մէշի միջի մի եարայ-փարէն կոխած արջ ռաստ էկաւ: — Ո՞ւր ես էթում, հարցրեց: Ասեցի. — Էթում եմ Ասու կուշտը գանդատ: — Որ էթում ես, ասեց, ինչ կ'ըլնի իմ դհիցն էլ գանդատ անես. էսքամ տարի եարէն ստղ ջանս վեր ա կալէ, ինչ անում եմ, չեմ անում՝ չեմ կարում լաւանայ. մի հարցրած, տես իմ ճարն ինչ պտի ըլնի:

— Էն արջը, ասեց հրեշտակը, որ մի իսան բռնի ուտի, ալբիալը նրա եարէն կը սաղանայ:

— Էդ էղ, վրա բերեց թագաւորի տղէն, ճամփին մի քաղաքի միջով անցկենալիս մի մարդ ռաստ էկաւ: — Ո՞ւր ես էթում, հարցրեց: Ասեցի. — Էթում եմ Ասու կուշտը գանգտու: — Որ էթում ես, ասեց, ինչ կ'ըլնի իմ գանդատն էլ տեղ հասցնես. ըսենց, ըսենց գիւլլի բազ ունեմ, որ ինչ բար ու նուբար ասես՝ մէշը լիքն ա. համայ գարունքը որ գալիս ա, ծառերը ծաղկում են, բարը խալ խալ վեր ա տալի, մի լոլոկ էլ ա չեմ կարում բերանս դնեմ. Ասուն մի հարցրած, տես սրա ճարն ինչ պտի ըլնի:

— Էդ մարդի բաղի բարն էլ ընդուր ա վէ տալի, որ նրա ամեն մի ծառի տակին մի զիւզիւմ ոսկի ա ֆորած, էն ոսկու ժանդը չի թողում բարը հասնի: Գնա, գնա,

ասա թող քանդի, էն գլւգիւմ ոսկիքը հանի, էն վախտը իրա բաղի բարին արժանի կրնի:

— Էդ էլ հօ էդ, ասեց թագաւորի տղէն: Ճամփին մի ուրիշ թագաւորութիւնի միջով անցկացայ, էդ երկրի թագաւորը ինձ կանչեց, հարց ու փորձ արեց.—Ի՞նչ մարդ ես, ասեց, ուր ես էթում:—Գլան թագաւորի տըղէն եմ, ասեցի, էթում եմ Ասոււ կուշտը գանդատ:—Որ էթում ես, ասեց, իմ գանգատն էլ տեղ հասցրա: Ես, ասեց, էսքամ տարի ա ըստէ թագաւոր եմ, ինչ անում եմ, չեմ անում, ինչ պատիմ ասես՝ տալիս ես, չեմ կարում իմ երկրի գողութիւնը, մարդասպանութիւնը վերջացնի: մի Ասուն հարցրա, տես իմ ճարին ինչ պտի ըլնի:

— Էդ երկրի թագաւորը, ասեց հրեշտակը, կնիկ ա, ընդուր նրա խօսքը կապի չեն դնում. նրա տեղակ որ տղամարդ ընի, նրա մի խօսքն էլ ա զեննին չի մնայ, արած գիւանն էլ կ'անցկենայ ու մարդասպանութիւնը, գողութիւնն էլ կը վերջանայ:—Հրեշտակը էս կ'ասի թէ չէ, ալբիալը աներևութք կրնի:

Թագաւորի տղէն Ասուն փառք ա տալի, վէ կենում, ուրսիս ուրսի իրա էկած ճամփովը եդ դառնում: Գալիս ա, գալիս ա, գալիս ա, հասնում ա էն թագաւորի երկիրը: իթում ա դրան մին մին նաղլ անում հրեշտակի ասածը:

— Թրուտ ա, ասում ա էդ երկրի թագաւորը, ես կնիկ եմ, դրա հմար էլ խօսքս չի անցկենում: Բայ որ ըստենց ա, ասում ա, արի ուր ինձ առ, իմ տեղը նստի թագաւոր, հաղիր Աստօծ քեզ ինձ զսմաթ ա արէ:

— Զէ, ասում ա թագաւորի տղէն, ես պտի էթամ

իմ երկիրը, բալի իմ կորցրած հարստութիւնը, մալ ու դոլվաթը էլ եդ իմ ձեռը գցեմ:

Ասեց, տուեց, անցկացաւ: Էկաւ, էկաւ, էկաւ, շատն ու քիչն Աստօծ գիտայ, հասաւ էն մի քաղաքը: Պան էկաւ, էն մարդին գտաւ, ասեց թէ Աստօծ նրա գանգատին ինչ գիւան ա կտրէ: ին լիքատիրոնչ հեննայ դնաց, նրա ծառերի քօքերի տակը փորեց, տեհաւ դօթոր ամեն մի ծառի տակիցը հրէս մի գիւզիւմ սոկի դուս էկաւ: Յիքատէրը ուրախանում, աշխարով մին ա ըլնում:

— Թագաւորի ցեղ, ասում ա լիքատէրը, քեզ մի բան պտի ասեմ, չեմ գիտայ անկաջ կ'անես, թէ չէ:

— Ասա, ասում ա թագաւորի տղէն. ին՛ չեմ անկաջ անի:

— Չունքի դու ինձ ըսենց մի լաւութիւն արիր, իմ գանգատը տեղ հասցրիր, էս հարստութիւնի, էս խազինի տէր դարձրիր, ես էլ ուզում եմ քեզ մի լաւութիւն անեմ: Ես եմ, ասում ա, մի մինուճար աղջիկ, էլ զադ չ'ունեմ. արի աղջկանս առ, դառի ինձ փեսայ, ըստէ կաց: Իմ էլ հայ-հայը գնացէ, վայ-վայն ա մնացէ. մեռնելուց եղը էսքամ հարստութիւնը, մալ ու դոլվաթն էլ կը մնայ քեզ. քանի սաղ ու կենդանի էք՝ մարդ ու կնիկ կ'ուտէք, կը խմէք, դովրան կը քշէք:

— Զէ, ասում ա թագաւորի տղէն, ես ըստէ չեմ կարայ մնայ, պտի էթամ էլ եդ իմ երկիրը, իմ կորցրած հարստութիւնը էլ եդ ձեռ գցեմ:

Ըսենց թագաւորի բէդոլվաթ տղէն իրա բախտին քացի տուեց, լիքատիրոնչ ասածին անկաջ չ'արեց, իրա ճամբէն ըռնեց, գնաց: Գնաց, գնաց, գնաց, էն մէշի միջի եարալու արջին ուստ էկաւ:

— չը՛, թագաւորի ցեղ, ասեց արջը, Ասսուն տեհամը,  
իմ գանգատն արեցիր:

— չա՛, ասեց թագաւորի տղէն. արեցի:

— Բա ինչ ասեց, հարցրեց արջը:

— Ասեց՝ թնդ մի խան բռնի, ուտի, ջանի եարէն  
ալբիալը կը սաղանայ:

— Բա՛ս որ բտենց ա, ասեց արջը, արի քեղ ուտեմ.  
Հաղիր Աստօծ քեղ ինձ դամալժ ա արէ. մօտիկը թողած՝  
էլ խի՞ հեռու ման գամ:

Էս ասեց թէ չէ, վրա պրծաւ, բէդոլվաժ տղին  
ձուիդ ձուիդ արեց, կերաւ: Ուտելու բաշտան եարայ-մա-  
րէն սաղացաւ: Ասսու հրամանն էր, որ թագաւորի բէ-  
դոլվաժ տղէն էս եարայ-փարէն կոխած արջին փայ  
ըլնի:

—..\*..

## ՍՈՒՏԼԻԿ ԱՎՉՈՒ ՀԵՔԱԹԸ

(Յրարատեան բարբառով)

Ղլնում ա չինում մի ավչի: Էս ավչին ոնչ թու-  
անք ա ունենում, ոնչ բարութ, ոնչ սեշմա, ոնչ շուն,  
մախլասի ըսկի զադ չի ունենում:

Օրէն մի օրը էդ ավչին վեր ա կենում, էթում ավի:  
Էթում ա, էթում, տենում ըհ՛ը, ճամփին իրեք թուանք  
վեր ընկած: Ուրախանում, աշխարով մին ա ընում: Էն սը-  
հաթը կուանում ա, վեր ունում, տենում էդ իրեք թուան-  
քից էրկուսը կոտրած ա, որ ասես բանի պէտքը չի, էն  
մինն էլ չախմախ չ'ունի: Էդ անչախմախ թուանքը ուսն  
ա զցում, էթում: Էթում ա, էթում ա, էթում ա, մխե-  
լի տեղ էթում ա, ճամփին իրեք գեօլի ա ուսստ գալի.  
Դրանցից էրկուսը ցամաքած ա ընսում, էն մնի միջին էլ  
որ ասես ջրի թրիշա չինում: Էդ անջուր գեօլի միջին  
տենում ա իրեք օրդակ լեղ են տալի. դրանցից էրկուսը  
սատկած ա ընսում, մինն էլ կիսաջան: Թուանքը զարա-  
վլում ա, կրակ տալի: Տալու բաշտան էն կիսաջան օր-  
դակը վեր ա ընկնում: Էթում ա, վեր ունում, էլ եդ  
էթում իրա ճամփին:

Էթում ա, էթում ա, էթում ա, ճամփին իրեք գե-

դի առաստ գալիք: Եդ գեղարէնքից էրկուսը խարաբայ ա ըլնում, մնի միջին էլ որ ասես շէնիկ չիլնում: Մըննում ա էդ անշէնլիկ զեղը, զէս ա էթում, զէն ա էթում, որ շատ ման ա գալիք, մի քարուքանդ, բրիշակ էլած տուն ա գտնում: Մննում ա նեքսեւ, տենում տան պուճախին հրէնիկ իրեք պուլիկ դրած. էդ պուլիներից էրկուսը ջարդած ա ըլնում, մինն էլ ոռք չի ունենում: — Ի՞նչ անեմ, ի՞նչ չ'անեմ, ասում ա, որ էս օրդակը խաշեմ: — Բերում ա կրակ անում, էդ անոռք պուլիկը ջուր ա լցնում, դնում վրէն որ տաքանայ: Եննայ օրդակը թէրուում ա, փորը ճղում, լաւ, սիրունիկ լստիկում, զցում պուլիկ մէջը: Եդ օրդակը խաշում ա, նստում մէն մէնակ ուտում, կշտանում, Ասուն փառք տալիք: Ըստէ մի քիչ մնում ա, դնջանում, նոր վէ կենում, ընկնում ճամփայ:

Էթում ա, էթում, ճամփին սրան մի ուղտ ա ռաստ գալիք: Եդ ուղտը բռնում ա, նիլնում, քշում: Էթում ա, էթում ա, մի քանի օր կուզէկուզ էթում ա, գուս ա գալիք մի քաղաք: Եդ քաղաքումը էդ ուղտը ծախում ա, ըտրա փողը տալիս ա մի էշ առնում, էրկու հատիկ էլ կորեկ: Եդ էրկու հատիկ կորեկը խուրջնի ջուխտ աչքն ա լցնում, խուրջնը գցում իշի վրէն, էլ եդ էթում իրա ճամփէն:

Էթում ա. էթում, մի օր, էրկու օր, իրեք օր, մախլասի հինգ օր, ճամփին սրան մի գետ ա ռաստ գալիք: Տրխները հանում ա, որ գետը անցկենայ. ոնց ա ըլնում, ոնց չիլնում, էշը փախնում ա: Իշի հննուցը վազ ա տալիք, բռնում, եդ բերում: Ընչանք դրա գալը տրխները զետը անց են կենում էն երեսը: Դէս տրեխ, զէն տրեխ, ման ա գալիք չի դտնում: Վարաւորդ ա տ-

նում, տենում, իրա տրխները անց են կացէ գետի էն դրաղը, դառէ մի լուծ եզը ու ընդէ իրանց իրանց գետինը վարում են: Ինքն էլ էշը նիլնում ա, մի ֆանդով գետը անցկենում: Ըստէ խուրջինը վեր ա դնում, էն էրկու հատիկ կորեկը հանում, մի հատիկը բերում ա եզների վարած տեղը ցանում, մի հատիկն էլ եդ գցում իտորջինը: Յանում ա, պրծնում, խուրջինը էլ եդ գցում ա իշի վլէն, վէ կենում, ընկնում ճամփայ: Էլ եդ իրանց դեղը:

Գալիս ա, գալիք, մի օր, էրկու օր, իրեք օր, մի շաբաթ, էրկու շաբաթ, իրեք շաբաթ, մախլասի մի ամիս, հասնում ա իրանց զեղը: Էշը քշում ա դուզ գեղի ջաղացը: Տանում ա էն կորկի հատիկը ըտէ աղում: Աղում ա, աղում ա, օխտն օր, օխտը գշեր աղում ա, չի պրծնում: Տենում ա պրծնելու ճար, իլլաճ չը կայ, բերում ա մնացածը ջաղացբանին ա բախշում, աղացածն էլ լցնում ա ջուալները, բերանները կապոտում, սէլեր քրէնում, բերում իրանց տունը:

Անց ա կենում միքանի վախտ, օրէն մի օրը էդ ավշին առում ա. — Էթամ տենամ կորեկը հասել ա, թէ չէ: Մանգաղը վեր ա ունում, ընկնում ճամփայ: Գալիս ա, գալիս ա, շատն ու քիչն Աստօծ զիտայ, հասնում ա էն դեղի զրաղը: Տենում ա, է, կորեկը հասել ա, հնձելու էլ լաւ վախտն ա: Մանգաղը գցում ա որ հնձի, բիրդան կորկի միջիցը մի վիրունի խոզ տ դուս պրծնում, փախնում. մանգաղը եննուցը որ վրա չի անում, մանգաղը էթում ա խրում խոզի կողքը: Եդ խոզը մանգաղը վորին վազ ա տալիք արտի միջովը. մի դհիցը վազում ա, մի դհիցն էլ արտը հնձում. ըսենց վազ տալօն կորեկը սաղ հնձում ա, պրծնում, զլուս առնում, վախնում: Եննայ

Էդ ավչին կամացկամաց հնձածը հաւաքում ա: Հաւաքում  
ա, հաւաքում, որ տենում ա պրծնելու ճար չը կայ, կորկի  
շատ փայը թողում ա առանց հաւաքիլ. էթում ա սէլեր  
քրէհում, հաւաքածը բարձում ենալլա դպա իրանց գեղը:

Գալիս ա, գալի, շատն ու քիչն Աստօծ զիտայ,  
հասնում ա իրանց գեղը: Աէլերը քշիլ ա տալի գուղ ի-  
րանց կալերը: Ըտէ սէլերը դարտկիլ ա տալի, դէղեր  
դնիլ տալի, թողում: Եննալ հօտաղներ ա բռնում, էդ կո-  
րեկը շաղ են տալի, փուռմ կալի միջին, կամերը լծում,  
քշում: Քշում են, քշում են, քշում են, մի օր, էրկու  
օր, իրեք օր, մի շաբաթ, էրկու շաբաթ, իրեք շաբաթ,  
մախլասի մի ամիս՝ չի պլծնում: Միքանի գէղ ընենց  
թողում ա, կասած կորեկը կրիլ ա տալի տուն.— էլ ամ-  
բար, էլ ֆոր, էլ ծակ ու ծուկ չի մնում՝ լցնիլ ա տալի,  
չի հատնում:— Ի՞նչ անեմ, ի՞նչ չ'անեմ, ասում ա, մնա-  
ցածը նրգէ լցնեմ: Միտք ա անում, միտք ա անում,  
վերջը մի լու ա բռնում, մորթում, կաշին քերթում, տիկ  
հանիլ տալի, մնացած կորեկն էլ բերում ա էդ տկի մէջն  
ածում:

Անց ա կենում միքանի վախտ, օրէն մի օրը մի ձի-  
աւոր ա անցկենալիս ըլնում էդ ավչու տան կշտովը: Էդ  
ձիու նալը մի քարի ա դիպնում, ընենց մի կրակ ա գուս  
դալի, ընենց մի կրակ ա գուս դալի, որ էդ ավչու դէ-  
ղերը սաղ կպնում ա, էրւում. տուն, տեղ, գոմ, մարաք,  
մախլաս ի՞նչ ունէր, չունէր էրւում ա, քուլ դաւնում:  
Կրակը որ հանգարտում ա, պրծնում, էդ ավչին ասում  
ա.— էթամ տենամ ըսկի ի՞նչ ա մնացէ, ի՞նչ չի մնացէ: Դի՞ս  
ա ման դալի, դէն ա ման դալի, ըստէ ա փորում, ընդէ ա փո-  
րում, վերջը որ դալիս ա իրանց մարաքի պատի տակը փո-  
րում ա, տենում ա, ըհ՛ը, ընդիան մի կապոյ դուս էկաւ:

Էդ կապոյը բաց ա անում, տենում միջին մի թղթի-  
կտոր, միջին էլ մի բան ա դրած: Տանում ա սրան,  
նրան կարդալ ա տալի, կարդում են, տենում էդ թղթի-  
միջին դրած ա. «Քու դլխով անցկացածը քօմմայ սուտ ա»:

Մին քանի վախտ անց ա կացալ, մին ասլան ա եկալ թա.

—Եկալ ըմ թաքաւէրին ախճիկն օղիմ:

Էլհա մէշնակնան հու մէծն ասալ ըն. —Կորի քինա, մէզ ախճիկ չ'օնենք քեզ տալի: Էլհա ախըրը զուաւ պիծի ախպէրը տուալ ա: Մին քանի վախտ էլ անց ա կացալ, մին դիւլար ա եկալ թա.

—Եկալ ըմ թաքաւէրէն ախճիկն օղիմ.

Էլհա էն երկունն ասալ ըն թա. —Տալ չընք: Պիծինն ասալ ա. —Տալու ըմ: Ախըրը պիծի ախպէրն ա տուալ:

Մին քանի վախտ անց ա կացալ, պիծի ախպէրն ասալ ա. —Ես պիտիմ փլան թաքաւէրի ախճիկն օղիմ: Քինացալ ա օշափին տօնն, ընտեղ քուրը ասալ ա.

—Ադա, հօր ըս եկալ. էս սհաթս օշափը կը կեա, քեզ կ'օտի:

—Պա հունց անխիմ, ասալ ա:

—Ըտեղ կեօղլու կաց, ասալ ա քուրը:

Ախպէրը կեօղլու ա կացալ: Օշափը եկալ ա, ասալ.

—Էս հինչ մրժմրժավէտ ա կեամ:

—Դէ ըսկի հինչ, ասալ ա կնէկը:

—Ասի, վէր քեզ կ'օտիմ, ասալ ա օշափը:

—Իմ ախպէրն եկալ ա, ասալ ա կնէկը:

—Թա վէր մեծը հու մէշնակն ինի, օտելու ըմ, թա վէր պիծինն ինի, աչկիս երան ա եկալ:

—Պիծինն ա, ասալ ա կնէկը:

Ետնան պիծի ախպէրը տիւս ա եկալ, պարով տուալ: Օշափն ասալ ա թա. —Հօր ըս եկալ: Թա —Եկալ ըմ քեզ ասեմ: Փլան թաքաւէրէն ախճիկն ինձ հետի օգիս: —Էդ իմ պէնը չի, ասալ ա օշափը. Քինա ասլանի կօշտը:

Պիծի ախպէրը եր ա կացալ քինացալ ասլանի կօշտը:

## ԹԱՔԱՎԵՐԵՆ ՏՂՈՐՉԸ ՀԱՔԵԱԹԸ

(Ղարաբաղի բարբառով)

Իւալ ա չիւալ մին թաքաւէր: Էս թաքաւէրս իւալ ա իրեք տղա: Էս թաքաւէրը վէր շատ պուաւալ ա, իւրան իրեք տղօրցը կանչալ ա, ասալ.

—Հուվէր կեա ախճիկըս օդէ, տուէք:

—Լիաւ ա, ասալ ըն տղէրքը:

Միքանի վախտ անց ա կացալ, թաքաւէրը մէռայ ա: Մին օշափ եկալ ա, ասալ թա.

—Եկալ ըմ թաքաւէրին ախճիկն օղիմ:

Մէծը հու մէշնակ տղէրքը ասալ ըն. —Քինա, քինա, մունք քէզ ախճիկ ըընք տալ: Պիծինն ասալ ա. —Պիրենք տանք: Նահանք ասալ ըն թա. —Տալ չընք: Պիծի ախպէրն ասալ ա. —Զէ վէր չէ, վէր իմ հարն ասալ ա՝ տալ պիտիմ: Պիծի ախպէրն ախըրը տուալ ա օշափին:

Թանօթ. հանգուցեալ ԱՌԱՅԻԼ ԲԱՀԱԹՐԵԱՆՑԻ ժողովածուից հրատարակում ենք հետևեալ հէքիաթները. —«Թաքաւէրին տղօրցը հաքեաթը». «Քասիպ մարթին հաքեաթը». «Խորթ ախճկանը հաքեաթը» և «Քօսակին հու քաչալին հաքեաթը»:

— Հօր ըս եկալ, ասալ ա քուրը. էս սհաթս ասլանը կը կեա քեզ կ'օտի:

— Բա հունց անեմ, ասալ ա ախպէրը:

— Կեօղլու կաց, ասալ ա քուրը: — Կեօղլու ա կացալ, պլծալ, ասլանը եկալ ա:

— Էս հինչ մըթմըթավէտ ա, ասալ ա ասլանը:

— Իսկի հինչ, ասալ ա կնէկը: Մին էլ ա ասալ թա.

— Էս հինչ մըթմըթավէտ ա, ասի, վէր էս սհաթս քեզ կ'օտիմ: Ասալ ա թա.

— Իմ ախպէրն եկալ ա: Նա էլ ասալ ա.

— Թա վէր մեծը եա մէշնակն ինի, օտելու ըմ. թա պիծինն ինի, աչքիս լուսին երան ա եկալ:

Պիծի ախպէրը տիւս ա եկալ, պարով տուալ: Ալանն ասալ ա թա. — Հօր ըս եկալ: Ասալ ա թա. — Եկալ ըմ վէր քեզ ասեմ, քինաս փլան թաքաւէրէն ախճիկն ինձ հետի օղիս: — Էտ իմ պէնս չի, ասալ ա ասլանը. քինա գիւղարի կօշտը: Քինացալ ա գիւղարի տօնը: Քուրն ասալ ա թա.

— Հօր ըս եկալ. էս սհաթս գիւղարը կը կեա, քեզ կը սպանէ: Պիծի ախպէրն ասալ ա.

— Բա հունց անեմ: Քուրն ասալ ա թա.

— Ըտեղ կեօղլու կաց:

Նա էլ կեօղլու ա կացալ: Պիւղարը եկալ ա թա.

— Էս հինչ մըթմըթավէտ ա: Կնէկը ասալ ա թա.

— Իսկի հինչ: Նա էլ ասալ ա.

— Էս հինչ մըթմըթավէտ ա, ասի, թաչինա գիւղիւմը ինձ:

— Իմ ախպէրը եկալ ա, ասալ ա կնէկը:

— Թա վէր մեծը հու մէշնակն ինի, ասալ ա գիւղարը, սպանելու ըմ. ամմա թա վէր պիծինն ինի՝ աչքիս լուսին երան ա եկալ:

Պիծի ախպէրը տիւս ա եկալ կեօղլու կացած տեղիսը, գիւղարին պարով տուալ: Պիւղարը ասալ ա թա. — Հօր ըս եկալ: Թա. — Եկալ ըմ վէր քեզ ասիմ փլան թաքաւէրէն ախճիկն ինձ հետէ օղիս: Նա էլ ասալ ա թա. — Բալամ, ես հունց անիմ: Պիւղարը մէթկ ա ըալ մէթկ, ախրը ասալ թա. — Մին մաշին կը շինիմ, ընդրանաւ կը քինաս ընդեղ, կեաս: Նա էլ ասալ ա թա. — Լիաւ ա: Մին քանի վախտան ետը մաշինը շինալ ա: Պիծի ախպէրը մաշինին մէչին նստալ ա, քինացալ թուշ էն թաքաւէրէն ախճիկն օժաղին հիւրթին երա կաղնաւ: Մաշինիցը վէր ա եկալ, հիւրթաւը նի մտալ օժաղը, տեսալ էն ախճիկը քօն, — մին կոխէն էլ բաքմաղ, մին կոխիկն մեղրը: Բաքմաղը խմալ ա, մեղրը կերալ, հիւրթաւը եր իլալ, մաշինին մէչին նստալ, դրւալի քինացալ դիւղբարէն տօնը:

Եքսը թաքաւէրէն ախճիկը եր ա կացալ, տեսալ բաքմաղը խմած, մեղրը կերած: Թաքաւէրէն նազիր-վազիրներէն կանչիլ ա տուալ, հրցրալ թա. — Հուվ ա նի մըտալ, իմ օժաղս: Նահանք էլ ասալ ըն թա. — Մունք ըլնք նի մտալ: Ախճիկը լատահանց թակել ա տուալ, կտորալ, թա. — Էլ չի նի մտնիք: Էլ հա քշերէն մէշտեղը պիծի ախպէրը մաշինը եր ա իլալ, գրուալի եկալ, էլ հա նի մտալ օժաղը, բաքմաղը խմալ, մեղրը կերալ, քինացալ: Եքսը թաքաւէրէն ախճիկը եր ա կացալ, նազիր-վազիրներէն, զեագոցը թակել ա տուալ, թա. — Խէ՛ ըք եկալ բաքմաղը, մեղրը կերալ: Էս ախճիկը իւրիւգիւնը մաննը կտրալ ա, պտատալ, հանցու վէր հեռիցը քօն չի ինի: Էն տղան էլ հա եկալ ա, ամա թաքաւէրէն ախճիկը բաքմաղը իւմելիս տեղը փունալ ա, թա. — Հօր ըս եկալ: Ասալ ա թա. — Եկալ ըմ քեզ օղիմ: Էս ախճիկը իւրան մազիցը մինը պուք ա

տուալ, տուալ էն տղէն հու ասալ. — Թա վէր էքուց կեաս  
թաքաւէրէն ասիս թա՝ եկալ ըմ ախճիկդ օգիմ, թաքաւէրն  
էլ տուանը չինարուն տակէն թաբաղա թղթեր ա փռելու,  
հու մին ջամ ճիւր ա լցնելու, տինի ծեռքէդ ասի թա՝ հանց  
եր իլ չինարուն պտոկը հու վէր եկ, վէր մին կաթ ճիւր չի  
կաթի: Տու էլ վէր մին պատառ եր ինիս, էդ մազը քցի  
ճէը, ճիւրը էն սհաթը կը սառչի: Երինելիցը  
ետը վէր կեալիս վէր առէ կը քշանաս, մազը կը հանիս:  
— Նա էլ ասալ ա թա՝ լիսւ ա:

Ին տղան ըստանից ետը եր ա իլալ մաշինը, քի-  
նացալ դիւլգարին տօնը: Եքսը եկալ ա թաքաւէրէն ա-  
սալ թա՝ եկալ ըմ ախճիկդ օգիմ: Թաքաւէրը պէրալ  
ա չինարուն տակաւը թաբաղէքը շարալ, մին ջամ ճիւր  
լցալ, տիրալ ծեռքէն, ասալ. — Թա վէր եր իլիր չինարուն  
պտոկը, վէր եկէր, մին կաթ ճիւր չի կաթից — ախճիկն  
քեղ երա կը փսակիմ: Թա վէր կաթից՝ քեղ կը սպանիմ:  
— Նա էլ ասալ ա թա՝ լիսւ ա: Մին խիլա տղան եր ա  
իլալ, մազը քցալ ա մէչը, ճիւրը սառալ ա, եր ա իլալ.  
մին էլ վէր կեալիս վէր պատառ ա մնացալ թա վէր կեա,  
մազը հանելիս տեղը մին կաթ կաթալ ա: Թաքաւէրը  
ասալ ա թա՝ բա էս հինչ ա: Տղան ասալ ա թա՝ վէր  
կեալիս տեղը իմ հար, իմ մար մէտս ընդաւ, աչկիցս մին  
կաթ ըրտասունք կաթից: Թաքաւէրը ասալ ա թա՝ լիսւ:  
Եննան օխտը օր, օխտը քշեր հրսանէք ա ըրալ: Տղան կնդանը  
եր ա կալալ, քինացալ:

Ըստուծանա իրեք խնձեօր վէր ընդնէ. — մինը ըսո-  
ղէն, մինը լսողէն, մինն էլ ըլ լսողէն:

## ՔՈՍՎԿԵՆ ՀՈՒ ՔԱՇԱԼԵՆ ՀԱՔԵԱԹԸ

(Ղարաբաղի բարբառով)

Ի լալ ա չիւալ մին քօսակ, մին էլ մին քաչալ: Սա-  
հանք ամէքը մին պարկ ցորեն ըն եր կալալ թա տանին  
ճղացումն աղ ին: Տարալ ըն աղալ: Քօսակ ախպէրն  
սսալ ա:

— Քաչան ախպէր, եկ պեղարձ թխինք:

— Ե'կ թխինք, սսալ ա քաչալը:

Տաշոր ճրաւ լցալ ըն, ակերը պարան տուալ մէչը,  
հունցալ հու պեղարձ թխալ. մինը մեծ ա տիւս եկալ,  
մինը պուճուր: Խս քօսակ ախպէրն սսալ ա.

— Թէ որ ըարհէնց ա, ամէքը մին սօտ ասինք. հիւրը  
վէր մեծ ինի՞ լոխ ընդբանն ա: Քաչալն ասալ ա՝  
լիսւ ա: Քաչալն ասալ ա.

— Պեղ մին զգան օնինք, ըտրա մէջին մին տօն  
շինեցինք, տանը կլինէն մին բախչա:

— Պեղ մին լիւ օնինք, սսալ ա քօսակը. էդ լիւն  
քցեցինք տօնը, տանը մէջին ծիւ ածից, տօնը վէր լցաւ,  
եր իլաւ հիւրթին էլ ծիւ ածից հու ինքը կորաւ, քիթի  
ոչ: Ասեղը հորումը վէր տուի, եր իլի տեսնամ իստամ-  
բուլ կալ ա կասում: Քինացի ընտեղ, լիւն քիթի պերի,

տեսնամ մէջքը եարա ա: Ազուպուրը տիրի մէջքին թխեցէ, ճղուպուրի ծառ փսաւ մէջքին: Ազուպուպուրի ծառը եր իլի, տեսնամ ընդրա մէջին մին բախչա. բախչան ման եկէ, մին ծմերուկը քիթի: Ծմերուկը օղեցի կտրիմ, կտրեցի ոչ. ծեռքս կոխեցի, նի չը մտաւ. կլեօխս կոխեցի, տեսնամ հազար ծիյավէր ման ըն կեալիս: Ասեցի.—ի՞չ ըք ման կեալիս: Ասեցին.—էրկու հարիւր մարթ ա կորալ, ման ընք կեալիս:

—Քօսակ ախպէր, ասալ ա քաշալը. քու սօտը աւելի մեծ ա:

Քօսակը պէղարձնէն եր ա կալալ, ետնան էրկուսը ճղացիցը հրէյ ըն իլալ: Հղբցէն քաշալն ասալ ա.

—Քօսակ ախպէր, մին պէղարձ տօ: Քօսակն ասալ ա.

—Խիաւ ա, տանը կը տամ: Մին աբասի տօ: Տամ: Քաշալն ասալ ա.

—Լիաւ ա, տանը կը տամ: Քօսակը մին պէղարձը տուալ ա: Եկալ ըն տօն: Քօսակը իւրան աբասին օղալ ա, քաշալը տուալ չի. սօտ մեռալ ա: Պերալ ըն թա պտանին, քօսակն տուալ ա՝ ես լիաւ կը պտանիմ: Եննան տիրալ ա կտաւէն մէջին, միսաթաւը մսէն նըհետ կարալ: Եննան տարալ ա թա թաղէ, տեսալ ա կեօղեր ըն կեալիս: Քօսակը նի ա մտալ քարէն տակը, մեռալին թողալ ընդեղ: Կեօղերը եկալ ըն նստոտալ, վէր կեօղացած փողերը փայ անին: Փայ ըն ըրալ, պրծալ, մինակ ընդեղ մնացալ ա մին թօր: Էս կեօղերը ասալ ըն.—Էս թրաւը էս մեռալին թխինք. վէր մէջան ճոյթ անի, հարիւր ոսկի ա կինը:

Էս քաշալը էս վէր ըսկացալ ա, ասալ ա.—Սեռալ նէր, եր կացէք: Քօսակն էլ ծէն ա տուալ.—Փունէ, կեամ

ընք: Կեօղերը էս վէր ըսկացալ ըն, փողերը ըտեղ ըն թողալ, փախալ: Էս քօսակը հու քաշալը եր ըն կացալ, փողերը փայ ըրալ, եննան քինացալ ըն իւրանց տօն:

Ըստուծանայ իրեք ինձեօր վէր ընդնէ.—մինը ըսորէն, մինը լսողէն, մինն էլ չը լսողէն:

## ԽՈՐՉ ԱԽՋԿԱՆԸ ՀԱՔԵԱԹԸ

(Պարաբաղի բարբառով)

Իլալ ա չ'լալ մին մարթ: Խո մարթս կնէդ ա  
ըրալ: Խո կնէդս մին վախտ ետ ա ընդալ, մին ախճիկ պե-  
րալ, ետնան մեռալ: Խո մարթս քինացալ ա մին կնէդ  
էլ ըրալ: Էլհա էս կնէդս ետ ա ընդալ, մին ախճիկ պերալ:  
Խո էրկու ախճիկքս մնացալ ըն:

Մին վախտ էս կնէդը մին կուտանա, մին էլ մին  
զիրվանքա պիւրթ, մին էլ մին կով ա տուալ էս խօրթ  
ախճկանը թա՝ ըստահանք եր կալ, քինա. էս կուտանան  
ըսօր կեր, կեր—լեհա ինքը տեղը. էս պիւրթն էլ մանէ,  
պէր:

Խո ախճիկը եր ա կալալ, քինացալ. քինացալ ա, մին  
տեղ վէր եկալ, լաց իլալ: Խո կովն էլ լիւզիւ զիւտիւմ ա  
լիալ, ասալ ա.—Պիւրթը ինձ տօ մանսիմ, ես էլ քեզ  
կաթնը, մածուն կը տամ, կ'օտիս: Նա էլ ասալ ա թա՝  
լիալ ա: Խո կովս պիւրթին ճոնդը քիցալ ա ըռեխը, մին  
ճոնդն էլ ըռաշի ոննին մինը—ճոնդան մանալ, թիլն էլ  
ճոնդան ոռաւը տիւս ա եկալ, էս ախճիկս էլ կծկալ ա:  
Յտնան իւրիւզիւնը քինացալ ըն իւրանց տօն, կուտա-  
նան տուալ խորթ մօրը:

Յտնան էքսը էլհա էս ախճկանը խօրթ մարը պե-

րալ ա մին կուտանա, մին էլ մին զիրվանքա պիւրթ-  
տուալ թա՝ տար էս կուտանան կեր, կեր,—լիհա ինքը  
տեղը. էս պիւրթն էլ կիզի, պեր ինձ տօ:

Խո ախճիկս եր ա կալալ, քինացալ: Հըղցէն սովա-  
ծացալ ա, կուտրնէն կէսը կերալ ա. քինացալ ա մին կորի  
երս նստալ, պիւրթը կիզալ: Կիղելիս տեղը սանդերքը ըն-  
գալ ա կորին տակը: Խո ախճիկս քինացալ ա տեսալ  
կտրին տակէն մին պառաւ կնէդ նստած: Ասալ ա.

— Նանի, նանի, մին սոնդերքս ինձ տօ: Նա էլ  
ասալ ա.

Նանը քը մատաղ, մին եկ ըստեղ:

Ախճիկը քինացու ա, տեսալ հիսչիւ ըղանձած օտե-  
իս: Խո պառաւս ասալ ա.

— Նանը քը մատաղ՝ մին կլեօխս քթուէ: — Ախճիկը  
քինացալ ա, տեսալ՝ կլեօխը որթնաւ լիզը: Ասալ ա.

— Նանի, կլեօխս հունց թամուզ ա: Պառաւն  
ասալ ա.

— Նանը քը մատաղ, մին քինան էն կարասին եշի,  
տես մէջին հինչ կայ: Ախճիկը քինացալ ա, տեսալ՝  
կեօլթնուկ, մօկնը, ոռթնը մէջը լիզը: Ասալ ա.

— Նանի, հինչ լիալ հոտ ա կեամ: Յտնան ասալ ա.  
Նանի, ծարաւ ըմ: Պառաւը ասալ ա.

— Քինան հէնա մին սիպտակ ծով կայ, մին էլ ու  
ծով կայ. քինան սիպտակ ծովիցը խմէ, հա—սեփը ըլ  
խմիս:

Էն ախճիկը ասալ ա՝ լիալ ա: Քինացալ ա սիպ-  
տակ ծովիցը խմալ, սիպտկացալ ա, հանց տեսալ ճըրեաք,  
հու մին լիւսինգա էլ ճկատան կացալ: Յտնան քինացալ  
ա իւրանց տօն, ընդեղ մաթ ըն մնացալ, թա էս հունց

ըրաւ, վէր սիպտակից: Կուտընէն կէսը տուալ ա մօրը,  
նա էլ խոսացալ չի:

Ետնան էքսը էս կնէզը պերալ ա իւրան ախճկանը  
մին կուտանա, մին էլ մին գիրվանքա պիւրթ տուալ թա՝  
կուտանան տար, կեր, պիւրթն էլ կիզի, պեր:— իս ախ-  
ճիկս եր ա կալալ, քինացալ: Քինացալ ա էլհա էն կըտ-  
ըն նստալ՝ կիզալ: Կիզիլս տեղը սանդէրքը վեր ա ըն-  
դալ. կորին տակին, էլհա եշալ ա, տեսալ՝ մին պառաւ  
ընդեղ նստած: ին ախճիկը ասալ ա.

— Քաւթառ, մին սանդէրքը ինձ տօ՛ է: Նա էլ  
ասալ ա.

— Քաւթառը քը մատաղ, մին եկ ըստեղ: Ախճիկը  
քինացալ ա, տեսալ հիւչիւլ ըղանձած օտելիս: Ասալ ա.

— Ա՛ քաւթառ, ա իմանսըզ, հիւչիւլ ըս օտում:  
Պառաւն էլ ասալ ա.

— Քաւթառը քը մատաղ, մին եկ կլեօխս քթուէ:  
Քինացալ ա թա քթուի, տեսալ ա՝ սաղ կլեօխը ոռթ-  
նած, էլհա ուշունց ա տուալ.

— Քաւթառ, ինչ ըս կլեօխդ ըստհէնց պահում. ինչ  
ըս թամիւզ պահում: Պառաւը ասալ ա.

— Քաւթառը քը մատաղ, մին քինա էն կարասին  
եշի, տես հինչ կայ մէչին:— Ախճիկը քինացալ ա, տե-  
սալ կարասի մէչը հոտած զլտերաւ լիդը: Եկալ ա ասալ.

— Քու կլինդ քար ընդնէ, ինչի ըս կարասը նհէնց  
պահում: Ետնան ասալ ա.— Քաւթառ, ծարաւ ըմ. ջուր  
տօ՛ խմիմ:

— Քաւթառը քը մատաղ, ասալ ա պառաւը. քինա  
հէնա մին աև ծով կայ, մին էլ մին սիպտակ. — սիպտա-  
կիցը խմիս ոչ, հա, ուկիցը խմես:

Իս ախճիկս քինացալ ա, սկան խմալ: Աէր խմալ ա,

էն սկաթը սւացալ ա, մին էլ մին էշու քանթալ ճկա-  
տան կախ ա իլալ: իս ախճիկս քինացալ ա իւրանց տօն:;  
իւրան մարը եկալ ա տեսալ՝ էշու քանթալը ճկատան  
կախ. մնացալ ա սուս կացած: Ետնան մարը հրցրալ ա.  
ախճիկը էն պառաւէն նաղլը ընդրան արալ ա:

Հստուծանա իրեք խնձեօր վէր ընդնէ.— մինը  
ըսողէն, մինը լսողէն, մինն էլ չը լսողէն:



## ՔԵԱՍԻԲ ՄԱՐԹԻՆ ՀԱՅԵԱԹԸ

(Պարագաղի բարբառով)

Իլալ ա չիլալ մին մարթ: Խս մարթիս էլ իլալ ա  
էրկու պիծի տղա: Խս տղէրքս ամէն օր քիւնիւմ ըն  
իլալ փադ անում, պիւրում ծախում: Մին օր էլ քինա-  
ցալ ըն փադի. փադ պիրելիս տեղը մին զուշ երկնքիցը  
վեր ա եկալ, էս տղօրցս ըռաչին մին ծիւ ածալ, քինա-  
ցալ: Խս տղէրքս էս ծիւն եր ըն կալալ, պերալ: Մին  
ջուհուդ եկալ ա 500 մանէթի ծիւն առալ: Ամէն օր  
քինում ըն իլալ փադի. էն զուշն էլ կեամ ա իլալ մին  
ծիւ ածում էս տղօրցս ըռաչին, նահանք էլ տանում ըն  
իլալ, էն ջուհուդը 500 մանէթի առնում ա իլալ:

Խս տղէրքս մին օր էն զուշին մսաւ, զատաւ խա-  
փալ ըն, փունալ: Խս զուշն էլ տանը ծիւ ածում ա  
իլալ, հու նահանք էլ էն ջուհուդին երա ծախում ըն  
իլալ: Լստրհենց անելաւ ըստահանք շատ հարստացալ  
ըն, մեծ ամարաթ շինալ: Լստրանայ ետը էս տղօրցը  
հարը քինացալ ա զարիբօթիւն:

Խս ջուհուդը էս տղօրցս մօրը նշեա գոստացալ ա:  
Խս կնէդը ջուհուդին ասալ ա թա՞ ինձ օգէ: Կա էլ ա-  
սալ ա թա՞ էդ զուշը մօրթէ, տրա թօքը մին էլ կլեօ-  
խը իփի, տիր փլաւէն երան օտիմ — քեղ օգիմ: Կա էլ

ասալ ա թա՞ լիաւ ա: Էդ կնէդը էդ զուշը մօրթալ ա,  
կլեօխը հու թօքը իփալ: Խս տղէրքս եկալ ըն տօն, տե-  
սալ զուշը մօրթած, կլեօխը հու թօքը իփած: Լստա-  
հանք էլ վէր սոված ըն իլալ, ժինը թօքն ա կերալ,  
մինն էլ կլեօխը: Հու վէր էս զուշին կլեօխն ա կե-  
րալ, թաքաւէր ա գառնակու, ամմա հու վէր թօքն ա  
կերալ: ամէն քշերաւ եր ա կենալու, տեսնայ կլիրտա-  
կէն 500 մանէթ: Ետաւ էս ջուհուդը եկալ ա թա՞ դէ  
պէր օտիմ: Կնէդը քինացալ ա տէս ման եկալ, տէն  
ման եկալ, զատ չի քիթալ. ետաւ էն էրկու տղօրցանից  
հրցրալ ըն թա՞ կերալ ը՞ք: Կահանք էլ ասալ ըն թա  
հա: Խս կնէդը էլհա ասալ ա՝ ըա մհէկ հինչ անիմ,  
վէր ինձ օգիս: Ջուհուդը ասալ ա թա՞ մհէկ էլ էրկու  
տղօրցս մօրթէ, մինին փորիցը զուշին կլեօխը հանէ  
օտիմ, մինին սրտան էլ թօքը հանէ, վէր օտիմ, ետաւ  
քեղ օգիմ: Խս կնէդը ասալ ա թա՞ լիաւ ա:

Խս տղէրքս գոյմիշ ըն իլալ, կլեօխ եր կալալ, փա-  
խալ օրիշ երգիր: Ամէն օր թօք օտող տղին կլիսատակէն  
էլ 500 մանէթ ա իլալ, էտ փողաւն էլ լիաւ սիւրիւն  
ապրալ ըն: Քինացալ ըն, քինացալ ըն, տեսալ ըն էրկու  
հոկէ. մինը մինաւն ա քինացալ, մինն էլ մինաւը:

Էն տղան վէր թօքը կերալ ար, քինացալ ա մին  
տան վէր եկալ. ընդեղ էլ մին չանգի ա իլալ: Էն չան-  
գիւն նհէտ գոստացալ ա: Խս չանգին ասալ ա թա՞ ինձ  
փող տօ: Կա էլ թա՞ լիաւ ա: Ամէն քշերաւ 500 մա-  
նէթ փող ա իլալ տամ: Խս չանգին ասալ ա թա՞ էտ  
փողը քեղ հիշտեղան ա: Կա էլ թա՞ իսկի հիշտեղան:  
Էլհա ասալ ա՝ էտ փողը քեղ հիշտեղան ա: Թա՞ դէ իս-  
կի հիշտեղան, ինձ օնիմ: Խս չանգին պերալ ա մին քանի  
մարթ նստրցըրալ, մին էլ էն տղան հու ըստեղ գինէ

խմբցրալ, հըրփիրցրալ։ Իս չանգին էն տղէն ասալ ա՞ էն փողը հիշտեղան ա։ Նա էլ ասալ ա թա՛ մին դուշի թօք ըմ կերալ, ամէն քշերաւ եր ըմ կենում, տեսնում, 500 մանէթ կլիստակէս։— Իս չանգին թամբաքիւ ա պիրիլ տուալ, ածալ պօկը. եննա էս տղան սերտը պարան ա տուալ, թօքը վէր ա ընդալ, շիւտ ինքը եր ա կալալ, կօլ տուալ։

Իս տղան էքսը եր ա կացալ, տեսալ վէր էլ կլիստակէն 500 մանէթ չի կա. կիդացալ ա վէր էն չանգին ա իւրան ըստըհենց ըրալ։ Կլեօխ ա եր կալալ, քինացալ։ Քինացալ ա, քինացալ, տեսալ վէր չորս ջուհուդ կուէւ ըն անում։ Էն ջուհուդնէն էլ ասալ ըն։— Թի՛ հես ա լիաւ տեռաւ, էս տղան եկաւ, փայ կ'անէ։ Իս տղան քինացալ ա տեսալ՝ մին սուփրա, մին մուտանայ, մին գեաբա, մին էլ մին դամշի։ Ասալ ա թա՛ սահանք հինչ կ'անին։ Ասալ ըն թա։— Իս դամչաւը վէր մինին թխիս, հինչ վէր օղիս՝ էն կը տեռնաս. էս գեաբին մէջին էլ վէր նստիս, հինչ տեղ օղիս՝ կը տանէ. էս մուտանան վէր քցիս մաննըտ, հինչ վէր օղիս կը տա. էս սուփրան էլ վէր քցիս աղաքըտ, հինչ սուփրան վէր օղիս, սուփրին մէջին կ'ինի. էս չորս պէնս, ասալ ա, փայ ըրա՛ մըդ երա։

Իս տղան չորս քար ա եր կալալ—մինն էն դօլը թող ըրալ, մինն էն դօլը թող ըրալ, մինն էն դօլը, մինն էլ էն դօլը։ Ասալ ա թա։— Ճու վէր քինա մին քար առաջ պիրի, սուփրան իւրան. հու վէր ընդրանից ետը պիրի, դամշին իւրան. հու վէր էլ ընդրանից ետը պիրի, գեաբան իւրան. հու վէր ընդրանից ետը պիրի, մուտանան իւրան։— Լեհա վէր պատառ հուացալ ըն, էս տղան նստալ ա գեաբին երա, հու մուտանան քցալ, մաննք, սուփրան մին էլ դամշին տիրալ գեալին երան,

քինացալ չանգիւն տօնր հսալ։ Կզնուած դամչաւը թխալ ա չանգիւն, էշ շինալ, թամբաքիւ տուալ, նա էլ սերտը պտրան ա տուալ, թօքը վէր ա ընդալ, եր ա կալալ, կօլ տուալ հու էն զատերը ձեռնան խլալ, ետնան էդ չանգին պիրալ ա էնդգար քար ա կրել տուալ, վէր օգացալ ա թա ըստակէ։ Իս չանգին էս տղէն ճնանչում ա իլալ, եկալ ա կլեօխը քցալ տղէն վէնները թա եանի ինձ ըղատէ։ Տղան էլ զիգացալ ա վէր հինչ ա ասում, դամչաւը մին գեօնում թխալ ա, չանգին սղացալ ա։ Ետնան էլհա էս չանգին պիրալ ա էն տղէն նստցրալ, կինի խմբցրալ, հրցրալ թա՛ էն զատերը հօր ըն։ Նա էլ տեղն ասալ ա։ Զանգին քինացալ ա եր կալալ, հու էլհա թամբաքիւ տուալ, սերտը պարան ա տուալ, թօքը վէր ա ընդալ, չանգին եր ա կալալ, կօլ տուալ։ Իս տղան վէր օյսամծէշ ա իլալ, եր կացալ տեսալ վէր էն զատերը ընդեղ չըն, հու կլիստակէն 500 մանէթ չի կա, կլեօխ ա եր կալալ, քինացալ։— Աստրա ըստեղ թողինք, հու ետ տեռնանք էն մին ախպօրիցը խօսինք, վէր էն դուշին կլեօխն ա կերալ։

Էդ տղան քինացալ ա տեսալ, վէր մին քաղաքի թաքաւէր մեռած։ Ընդեղ էլ մին դուշ ա իլալ, վէր պեց թողում ըն իլալ, քինում ա իլալ մինին կլիսէն կաղնում. հուր կլիսէ վէր կաղնէ, ընդրա թաքաւէր կը շինին։ Պուշը պեց ըն թողալ, քինացալ ա էն տղէն կլիսէն կաղնալ։ Փանի պեց ըն թողալ, քինացալ ա էն տղէն կլիսէն կաղնալ։ Աստրա տարալ ըն մին օժաղ քցալ, ետնան պեց թողալ, էլհա քինացալ ա հիւրթաւը վէր եկալ ընդրա կլիսէն կաղնալ։ Ետնան ասալ ըն թա՛ մին քանէ վախտ թաքաւէր տինինք, թա վէր խելքաւ կառավարից՝ թաքաւէր տինինք, թա վէր խելքաւ չի կառավարից,

տիւս քըցինք: — Մին քանէ վախտ թաքաւէր ըն տիրալ,  
տեսալ վէր շատ իմաստութիւնաւ ա կուռավարում — ըստ  
րա թաքաւէր ըն տիրալ: Մէկդ ըստրա թողնինք, էն  
ժին թօք օտող ախպրօֆցը խօսինք:

Կտ տղան եկալ ա ընդեղ, վէր իւրան ախպէրը թաքա-  
ւէր ա տեռաւ էն քաղաքը: Խս թաքաւէրը ըստրա հեռու  
տեղան ճնանչալ ա, ամմա սա թաքաւէրէն ճնանչալ չի:  
Թաքաւէրը պերալ ա տուալ ըստրա իւրան կօշտր, հրցրալ  
թաքաւէրը լի՞չ ըս ըտըհէնց, ախրը ածէն օր քու կլխուակէտ  
500 մանէթ կար: Նա էլ հինչ վէր կլխուը անց ա կա-  
ցալ, ասալ ա: Խս թաքաւէրը էս վէր ըսկացալ ա, թախ-  
տան վէր տ եկալ, իւրան տեղ մին օրիշը թաքաւէր տի-  
րալ. ետնան մին կուպրուն զպան կապալ ա, իւրան ախ-  
րալ. պորը եր կալալ, քինացալ էն չանդիւն տօնք հսալ: Մին  
քանի վախտ տարալ ըն փող տուալ էս չանդիւն. առ էլ  
գիդացալ ա թա էլհա վանդ օնին, վէր ըստըհէնց փող  
ըն պիլում տամ. էս տղորցը նատրյրալ ա, կինի խրմը-  
ցրալ, վէր հրբիցնէ: Հիւր վէր կինի ա տուալ, լոխ իր-  
մալ ըն, ամմա էս թաքաւէրը հինչ վէր տուալ ըն՝ ածալ  
ա կուպրունի մէջը: Լոխ հարփալ ըն. էս թաքաւէրը եր  
ա կացալ թամրակի պերալ տուալ, ածալ էս չանդիւն  
պօկը, եօղկ ա եկալ, թօքը վէր ա ընդալ, ինքը եր ա  
կալալ, կօլ տուալ: Ետնան հրցրալ ա թա գենրան, զատթ  
հինչ տեղ ըն: Նա տեղը ասալ ա, քինացալ ա եր կալալ:  
Ետնան գեարին մէջին նստալ ա, իւրան ախպօրը տիրալ  
գեարին երան, եր կալալ ճինջի-պօմբի անելաւ քինացալ:  
Ինքը վէր ընդեղ թաքաւէր ա իլալ, իւրան ախպօրը  
թաքաւէր ա տիրալ, ինքն էլ նազիր-վէզիրը տեռալ: Մը-  
հէդ քինանք ըստրանց հօրը-մօրիցը խօսինք:

Ըստրանց հարը զարիբօթիւնից եկալ ա, տեսալ

տղէրքը ՝ընդեղ չըն: Կնդանը ասալ ա՝ տղէրքս հօ՞ր ըն:  
Նա էլ ասալ ա թա ինձ թողալ ըն, փախալ: Թա գէ՝  
ա կնէդ, եկ կլեօխ եր օնինք՝ քինինք: Կնէդն էլ ասալ  
ա՝ լիալ ա: Քինացալ ըն, քինացալ ըն, հասալ ըն էն  
քաղաքը, վէր իւրանց տղէրքը ընդեղ թաքաւէր ըն նըս-  
տալ: Թաքաւէր տղան հու մէկալ տղան իւրանց հօրը-  
մօրը ճնանչալ ըն. հարը-մարը ըստահանց ճնանչալ չըն:  
Խս թաքաւէր տղան պերալ ա տամ կօշտր, տանում մին  
ծոկ օթաղ, ընդեղ ասում թա մունք քու տղէրքդ  
ընք: Նա էլ հրցըրալ ա թա խէ՞ ըք փախալ:  
Ասալ ըն թա մեր մարը մեղ օղից սպանէ, մունք էլ փա-  
խէնք: Զանլաթը պերիլ ըն տուալ, իւրանց մօրը շախկա  
տուալ: Իւրանց հօրն էլ թաքաւէր ըն տիրալ հու իւ-  
րանք ընդրա զուլուզ ըրալ:

Բատուծանա իրեք խնձեօր վէր ընդնէ. մինք ըսողէն  
մինք լսողէն, մինն էլ չը լսողէն:



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԵՐԵՎ

1. Զութչի . . . . .
2. Աղդիլակ . . . . .
3. Քառասուն հարամի . . . . .
4. Սուտ հեքաթ . . . . .
5. Հալալը շը հորամող կնիկը . . . . .
6. Բէդօլվաթ տղէն . . . . .
7. Սուտիկ ավչու հեքաթը . . . . .
- ✓ 8. Թաքավէրէն տղօրցը հաքեաթը . . . . .
- ✓ 9. Քոսակէն հու քաշալէն հաքեաթը . . . . .
- ✓ 10. Խօրթ ախճկանը հաքեաթը . . . . .
- ✓ 11. Քեասիր մարթին հաքեաթը . . . . .

Գիւն է 50 ԿՊՊ.

Աաճառուում է Թիֆլիսի Կենտրոնական զբավաճառանոցում և ժողովրդի մօտ.

Тифлисъ.

Тиграну Навасардянцъ.

Городская Управа.

ՀՀ Ազգային գրադարան



NL0359728

46.019